ԳԼՈԲՈՒՍ

Հրատարակվում է
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ աջակցությամբ

10 (99)

ԵՐԵՎԱՆ

2018

ԳԼՈԲՈՒՍ

Թիվ 10 (99), 2018

«ԳԼՈԲՈՒՍ» ՏԵՂԵԿԱԳՐԻ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Աշոտ Թավադյան
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր

Աշոտ Թևիկյան
«Նորավանք» ԳԿՀ խորհրդական, տ.գ.թ.

Արա Մարջանյան
«Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն, տ.գ.թ., ա.գ.ա.

Գագիկ Հարությունյան (համակարգող)
«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն, ք.գ.թ.

Կարեն Վ.Կարապետյան
Տնտեսագիտության դոկտոր

Մուշեղ Լալայան
ՀՀԿ փոխնախագահ

Սամվել Մանուկյան
«Նորավանք» ԳԿՀ ավագ փորձագետ, ս.գ.թ.

Վահագն Ազլյան
«Նորավանք» ԳԿՀ խորհրդական, ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Հանրային կառավարման ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ

Վարդան Հարությունյան
Տնտեսական գիտությունների թեկնածու

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր
Գագիկ Հարությունյան

Գլխավոր խմբագրի տեղակալ
Արա Մարջանյան

Պատասխանատու խմբագիր
Խոնարհիկ Քարաուղլանյան

Պատասխանատու քարտուղար
Լուսինե Բաղրամյան

Խմբագիրներ
Արեստակես Սիմավորյան
Դիանա Գալստյան
Կարեն Վերանյան
Սամվել Մանուկյան
Վահագն Ազլյան
Վահրամ Հովյան

ԳԼՈԲՈՒՍ

Թիվ 10 (99), 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գագիկ Հարությունյան
Սպիտակի երկրաշարժը.
իրողություններ և դասեր հայ հասարակության համար 4

Սամվել Մարտիրոսյան
Հայաստանի կիբեռանվտանգության
հիմնախնդիրները մնում են չլուծված 8

Դիանա Գալստյան, Լիլիթ Հակոբյան
ԶԼՄ բովանդակության մեջ «ատելության խոսքի» դրսևորումները 11

Արա Մարջանյան
Ղազախստանի արբանյակային ունակությունները
Մաս Բ. Վերգետնյա բաղադրիչ, սեփական արբանյակների ստեղծում 15

Հայկ Գաբրիելյան
Էրդողանի «քաղաքական առողջության» շուրջ 22

Սամվել Մանուկյան
Հարավային Կովկասի հասարակությունների
պատմական հիշողության որոշ խնդիրներ 31

Կարեն Վերանյան
Քաղաքացի-զինվորական կոնցեպտը Իսրայելում.
որոշ դիտարկումներ 37

ՍՊԻՏԱԿԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԸ. ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԴԱՍԵՐ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Գագիկ Հարությունյան[*]

Օբյեկտիվ պատմական հիշողությունն այն հիմքն է, որը կանխորոշում է հասարակության զարգացումն իր քաղաքակրթական-հոգևոր նկրտումներին համապատասխան: Հայտնի է, որ պատմական հիշողության դեֆորմացիան հանգեցնում է ծանր հետևանքների երկրի և հասարակության համար: Բնավ պատահական չէ, որ «փափուկ ուժի» ռեժիմով իրականացվող պատմական հիշողության (ինչը երբեմն անվանում են «պատմական քաղաքականություն») կեղծարարության կամ ջնջման արդի տեխնոլոգիաները դարձել են պերմանենտ «հիբրիդային» պատերազմների վարման կարևոր տարր: Նման ազդեցության արդյունքների ցայտուն դրսևորումներն են այն գործընթացները, որոնք այսօր դիտվում են Ուկրաինայում և այլ երկրներում, որտեղ տեղի են ունեցել «գունավոր հեղափոխություններ»:

Միևնույն ժամանակ, նման տեխնոլոգիաները կիրառվում են գրեթե բոլոր այն երկրներում, որոնք այս կամ այն չափով ներգրավված են աշխարհաքաղաքական բնույթի մրցակցային զարգացումներում: Նման երկրների թվում է նաև Հայաստանը, քանի որ հայ հասարակությունն այսօր գտնվում է գաղափարախոսական և տեղեկատվա-հոգեբանական խզման վիճակում միմյանց հետ մրցակցող աշխարհաքաղաքական ինտեգրացիոն նախագծերի միջև, որոնք պայմանականորեն կարելի է անվանել «Եվրասիական» և «Արևմտյան»: Այս համատեքստում Սպիտակի երկրաշարժի հերթական տարելիցի առիթով քննարկումների անցկացումը բավական ակտուալ է թվում, մանավանդ որ անգամ այդ ողբերգական իրադարձության մեջ տեղ գտան «պատմական քաղաքականության» մանիպուլյացիոն տեխնոլոգիաներ, դիցուք այնպիսին, թե երկրաշարժն, իբր, արհեստական էր և դա, բնականաբար, կատարել են խորհրդային զինված ուժերը: Սակայն վերադառնանք 30-ամյա վաղեմության այն ահավոր օրերին և անդրադառնանք որոշ ստույգ իրադարձությունների, փաստերի ու թվերի, որոնք արժանի են հիշատակման:

[*] «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի գործադիր տնօրեն:

Երկրաշարժը տեղի ունեցավ 1988թ. դեկտեմբերի 7-ին, ժամը 11:41-ին, ցնցումների ուժն էպիկենտրոնում կազմել է 8-10 բալ՝ ըստ 12 բալանոց սանդղակի: Դա XXդ. ամենաուժեղ երկրաշարժն էր Կովկասում: Հողին էր հավասարվել Սպիտակ քաղաքը, ավերվել էին Լենինական, Կիրովական քաղաքները, Հայկական ԽՍՀ շատ այլ բնակավայրեր: Աղետն ընդգրկել էր Հայաստանի տարածքի 40%-ը, որտեղ բնակվում էր մոտ 1 մլն մարդ: Բնական աղետից տուժել էին 21 քաղաք ու շրջան, 342 գյուղ, որոնցից 58-ը լիովին փլուզվել էր: Ավելի քան 25 հազ. մարդ զոհվեց, տարբեր աստիճանի վնասվածքներ ստացավ մոտ 19 հազ. մարդ: Ոչնչացվեց մոտ 8 մլն մ^2 բնակելի տարածք, ինչը կազմում էր հանրապետության ողջ բնակֆոնդի 17%-ը: Անօթևան մնաց ավելի քան 500 հազ. մարդ, տարհանվեց և երկրի առողջարաններ ուղարկվեց մոտ 120 հազ. մարդ, մոտավորապես 70 հազ. մարդ աղետի գոտուց դուրս եկավ ինքնուրույն: Ավերվեցին 277 դպրոց, 245 մանկապարտեզ, առողջապահության մոտ 250 օբյեկտ, 324 ակումբ ու մշակույթի տուն: Գործունեությունը դադարեցրեց ավելի քան 170 արդյունաբերական ձեռնարկություն, կործանվեցին տարեկան 1,9 մլրդ ռուբլու արդյունաբերական արտադրանքի թողարկման հզորություններ, մոտ 82 հազ. մարդ կորցրեց իր աշխատատեղերը: Էապես տուժեցին 209 սովխոզ և 90 կոլտնտեսություն: Ավերվեցին վերամշակող արդյունաբերության ավելի քան 80 ձեռնարկություն, 1200 անասնապահական շինություն: Հանրապետության ագրոարդյունաբերական համալիրի կորուստները կազմեցին ավելի քան 2 մլրդ ռուբլի:

Երկրաշարժի պատճառած ընդհանուր վնասը գնահատվում էր $14 մլրդ (1989թ. գներով)՝ չհաշված փրկարարական և վերականգնողական աշխատանքների ծախսերը: Ամենից շատ տուժել էր Սպիտակ քաղաքը, որտեղ զոհվել էր բնակիչների մոտ 50%-ը (9732 մարդ), վիրավորվել 1280-ը, անօթևան էր մնացել 8,7 հազար մարդ: 433 բնակելի շենքերից այստեղ լիովին ավերվել էր 274-ը: 232 հազ. բնակիչ ունեցող Լենինականում (այսօր՝ Գյումրի) փլատակների տակ մնաց մոտ 10 հազ. մարդ, վնասվածքներ ստացավ 4430-ը, անօթևան մնաց 180 հազ. մարդ: Քանդման ենթակա դարձավ պետական բնակֆոնդի 70%-ը և մասնավոր տների 18,7%-ը, լիովին ավերվեց տասներկու հարկանի և ինը հարկանի շենքերի 90, հինգ հարկանիների 10%-ը:

Սպիտակում տեղի ունեցած ողբերգության երրորդ օրը Խորհրդային Միությունում հայտարարվեց համազգային սգո օր: Սպիտակի երկրաշարժի հետևանքների վերացումն առաջին անգամ ԽՍՀՄ պատմության մեջ ընդունեց միջազգային բնույթ: Միխայիլ Գորբաչովը, իմանալով ողբերգության մասին, ընդհատեց իր միջազգային այցելությունը և եկավ Հայկական ԽՍՀ: Նա անմի-

ջապես հումանիտար օգնություն խնդրեց գրեթե բոլոր արտասահմանյան երկրներից: Երկրաշարժի հետևանքների վերացմանը մասնակցեցին ԱՄՆ-ը, Ֆրանսիան, Բելգիան, Իսրայելը, Նորվեգիան և էլի 107 պետություններ: 1989թ. մայիսի 10-ի դրությամբ Հայկական ԽՍՀ-ն օգնություն էր ստացել $550 մլն ավելի քան 110 երկրից, այդ թվում՝ Իտալիայից՝ $94,8 մլն, ԳԴՀ-ից՝ $84,2 մլն, ԱՄՆ-ից՝ $41,6 մլն, Մեծ Բրիտանիայից՝ $38 մլն, Չեխոսլովակիայի Սոցիալիստական Հանրապետությունից՝ $34,5 մլն, Ֆրանսիայից՝ $27,9 մլն: Հայաստանում փրկարարական աշխատանքներին մասնակցած օտարերկրյա մասնագետների ընդհանուր թիվը կազմում էր ավելի քան 3,6 հազ. մարդ, ներառյալ 1,5 հազ. փրկարար 26 արտասահմանյան երկրներից և մոտ 500 բժիշկ 16 երկրներից:

Սակայն, չնայած արևմտյան երկրների էական օգնությանը՝ փրկարարական և վերականգնողական աշխատանքների հիմնական ծանրությունն ընկած էր ԽՍՀՄ-ի վրա: Ողբերգության հետևանքների վերացման հանձնաժողովը գլխավորեց ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ Նիկոլայ Ռիժկովը, որն իրեն դրսևորեց որպես տաղանդավոր կազմակերպիչ և կարեկից մարդ: Նա, առանց չափազանցության, վայելում էր ողջ ժողովրդի սերն ու հարգանքը և իրավամբ համարվում է Հայաստանի ազգային հերոսը:

Աղետի առաջին իսկ պահերից Խորհրդային Միության տարբեր շրջաններից աղետի գոտի օրը 24 ժամ և անընդհատ գալիս էին բժիշկներ, փրկարարներ, շինարարներ, տեխնիկներ, հումանիտար օգնություն, դրամական միջոցներ: Միայն № 700412 հաշվեհամարին (Հայաստանի համամիութենական ֆոնդ) նրա գոյության 100 օրվա ընթացքում փոխանցվեց ավելի քան 1.374 մլրդ ռուբլի:

ԽՍՀՄ տարբեր շրջաններից Հայաստան ուղարկվեց 130 բժշկական բրիգադ՝ ավելի քան 1150 բժիշկներով, և այստեղ հարկ է նշել, որ առաջինը Սպիտակ հասան բժիշկներ Վրաստանից: Փրկարարներին հաջողվեց սեղմ ժամկետում փլատակների տակից հանել մոտ 40 հազ. մարդ: Փրկարարական և վերականգնողական աշխատանքներին ակտիվ մասնակցություն ունեցան խորհրդային բանակի ստորաբաժանումները, սահմանապահները և քաղաքացիական պաշտպանության զորամասերը: 1989թ. հունվարի 17-ի դրությամբ աղետի գոտում գտնվում էր մոտ 20 հազ. զինծառայող, այդ թվում՝ մոտ 10 հազ. պահեստազորային, որոնք զորակոչվել էին ԽՍՀՄ տարբեր մարզերից: Բնավ պատահական չէ, որ ի նշան երախտագիտության Սպիտակում բացվեց Հայաստանում երկրաշարժի հետևանքների վերացմանը մասնակցած խորհրդային զինվորների հուշարձանը: Քանդակը պատկերում է խորհրդային զինվորին, գրկին՝ երեխա: Հենց խորհրդային զինվորները

փրկեցին երեխաներին, կանանց, ծերերին և անտարբեր չմնացին ողբերգական այդ իրադարձությունների հանդեպ: Տարերքի հետևանքների վերացման գործընթացն առանց զոհերի չանցավ. կործանվեց հումանիտար բեռ հասցնող երկու ինքնաթիռ (խորհրդային և հարավսլավական):

Հայաստանում փրկարարական և վերականգնողական աշխատանքներում հատուկ դեր խաղաց ՌԽՖՍՀ-ն: Աղետի հետևանքների շուտափույթ վերացման համար 1988-1991թթ. գործի դրվեց ՌԴ ողջ պոտենցիալը: Շինարարական աշխատանքների պլանի համաձայն՝ միայն Լենինականում Ռուսաստանը պետք է շահագործման հանձներ 1043 մ² բնակելի շենք, ավելի, քան մյուս միութենական հանրապետությունները միասին վերցրած: Իսկ Հայկական ԽՍՀ գյուղական բնակավայրերի վերականգնումը գրեթե ամբողջովին ընկած էր ՌԽՖՍՀ ագրոարդյունաբերական համալիրի վրա: Ցավոք, երկրում քաղաքական և տնտեսական ճգնաժամի պատճառով այդ աշխատանքներն ավարտին չհասցվեցին:

Հայաստանում վերականգնողական ամբողջ աշխատանքը նախատեսվում էր իրականացնել երկու տարում: Միայն Լենինականում նշված ժամանակամիջոցում պլանավորվում էր կառուցել 2 մլն 100 հազ. մ² բնակարան: 1989թ. վերջին նախատեսվում էր Հայաստանի քաղաքներում և գյուղերում շահագործման հանձնել 1440 հազ. մ² և 720 հազ. մ² բնակմակերես համապատասխանաբար: Հատուկ այդ նպատակի համար կարճ ժամկետում երկրի տարբեր շրջաններում կազմավորվեցին և տուժած բնակավայրեր ուղարկվեցին ավելի քան 110 շինջոկատներ: Դրանցից 94-ն արդեն 1989թ. հունվարի 17-ին սկսեց աշխատանքը: Այդ ժամանակ Հայաստանում հաշվվում էր ավելի քան 40 հազ. շինարար, ովքեր եկել էին աղետի գոտի ԽՍՀՄ տարբեր շրջաններից: 1989թ. հուլիսին վերականգնողական և նորոգման միջոցառումներին մասնակցում էր ավելի քան 150 հազ. մարդ: Սակայն Սպիտակի երկրաշարժի հետևանքների վերացումն ընթանում էր գրաֆիկից նկատելիորեն հետ մնալով, և այն դադարեցվեց ԽՍՀՄ փլուզմամբ պայմանավորված:

Ամփոփելով արդյունքները՝ նշենք, որ Սպիտակի երկրաշարժը XXդ. ամենախոշոր բնական աղետներից էր, այն անդրադարձավ միլիոնավոր մարդկանց ճակատագրերի վրա և ազգային աղետ դարձավ Հայաստանի համար: Աղետի պատճառած տնտեսական վնասը համադրելի է Աֆղանական պատերազմի և Չեռնոբիլի ԱԷԿ-ի հետևանքների վերացման ծախսերի հետ: Երկրաշարժն անդառնալի հարված հասցրեց Հայկական ԽՍՀ ժողտնտեսությանը և ամբողջ երկրին ընդհանրապես, նպաստեց խորհրդային պետության տնտեսական և քաղաքական ճգնաժամի խորացմանը և ԽՍՀՄ փլուզման յուրատեսակ կատալիզատոր դարձավ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԻԲԵՌԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՄՆՈՒՄ ԵՆ ՉԼՈՒԾՎԱԾ

Սամվել Մարտիրոսյան[*]

Հայաստանի Հանրապետությունում առայժմ համալիր լուծված չեն կիբեռանվտանգությանը վերաբերող խնդիրները: Պետական և ազգային մակարդակով ընդհանուր, կոնսոլիդացված մոտեցումների և մեխանիզմների ձևավորումն անընդհատ ձախողվում է: Տարիներ շարունակ գրվում և նորից արտագրվում են զանազան պետական փաստաթղթեր, որոնք պետք է հայեցակարգային մոտեցումներ ձևավորեն տվյալ ոլորտում, սակայն գործը վերջնական լուծումների չի հասնում: Ինչո՞ւ: Պատճառները մի քանիսն են: Նախկին իշխանությունների միայն մի հատվածն էր կարևորում կիբեռանվտանգությանը վերաբերող խնդիրները: Մյուս հատվածը կամ դա համարում էր երկրորդական հարց, կամ ընդհանրապես պատկերացում չուներ, թե ինչի մասին է խոսքը: Ներկա իշխանություններն այս խնդիրների ժամանակը չունեն:

Մյուս պատճառն այն է, որ պարզ չէ, թե ով իրականում պետք է համակարգի այս խնդիրները, ում պետք է պատկանեն կամ ենթարկվեն ձևավորվող ազգային կիբեռանվտանգության կենտրոնը կամ նմանատիպ այլ կառույցները: Հասկանալի պատճառով, մի շարք կառույցներ փորձում են «իրենցով անել» կառույցը, որն իրականում կարող է դառնալ բավական ազդեցիկ օղակ, որը նաև կմիավորի պետական և մասնավոր հատվածները: Իսկ թե ով կլինի համակարգողը՝ դրանից շատ բան կփոխվի հետագայում: Պարզ է, որ ուժայինների պատկերացումները բավական տարբեր են քաղաքացիական կառույցների պատկերացումներից:

Կա նաև հստակ ֆինանսական հարց: Նման կառույցները, որպեսզի ձևական չլինեն, պետք է լուրջ ֆինանսավորում ունենան: Կիբեռանվտանգության ոչ մի արհեստավարժ մասնագետ չի մտնի պետական կառույց պետական աշխատավարձով:

Ի՞նչ ունենք այժմ: Գոյություն ունի ԱԱԾ հատուկ ստորաբաժանում, որը պաշտպանում է կառավարության կիբեռհատվածը: Ընդ որում, ամբողջական հարակից կառույցներ դուրս են մնում «անձրևանոցի» տակից: Արցախը նույն-

[*] Փորձագետ:

պես գրեթե պաշտպանված չէ: Գոյություն ունի Անձնական տվյալների պաշտպանության գործակալություն, որն իրականացնում է իր հատվածում մշտադիտարկում, հանրային իրազեկում և այլն: Կենտրոնական բանկն իր կողմից վերահսկում է մասնավոր բանկային հատվածը և պարտադրում անցնել տեղեկատվական անվտանգության ստանդարտների: Ոստիկանության կիբեռբաժինն իրականացնում է ոստիկանական գործողություններ կիբեռտիրույթում: Բանակը ձևավորում է կիբեռմիավորում, սակայն դրա գործառույթները փակ են:

Սրանով Հայաստանի կիբեռանվտանգությունը եզրափակվում է: Ի՞նչ ռիսկեր է առաջացնում այն, որ չկա ընդհանուր համակարգում և մի շարք հատվածներ չեն ապահովվում.

ա. Բաց են մնում կրիտիկական ենթակառուցվածքները: Օրինակ, էներգահամակարգը, տրանսպորտային և այլ համակարգեր, որոնք հաճախ պետության անմիջական վերահսկողության տակ չեն, մյուս կողմից՝ դրանց վրա լուրջ կիբեռհարձակումները կարող են ունենալ ծանր հետևանքներ ողջ երկրի մակարդակով: Խնդիրը շատ համալիր է. օրենսդրորեն նկարագրված չէ, թե ինչ է կրիտիկական ենթակառուցվածքը, չկա դրանք վերահսկող մարմին, չկան օրենքներ, որոնք թույլ կտան պետական մարմիններին զննել խոցելի հատվածները մասնավոր հաստատություններում: Ավելին, ընդհանրապես հայտնի չէ, թե որոնք են մեր խոցելի ենթակառուցվածքները կիբեռհարձակումների տեսանկյունից:

բ. Գոյություն չունի հանրային իրազեկում լուրջ վտանգների դեպքում: Նաև չկան կրթական ծրագրեր, որոնք թույլ կտային նվազեցնել հանրության վրա զանգվածային ազդեցության բացասական հետևանքները: Սա մեր ողջ հանրությունը դարձնում է մի մեծ կրիտիկական ենթակառուցվածք:

գ. Եթե Ադրբեջանի կողմից կիբեռհարձակումները մինչև վերջին տարիներն ունեին քաոտիկ բնույթ և հիմնականում իրականացվում էին անկախ ազգայնական խմբավորումների կողմից, ապա իրավիճակը փոխվում է: 2012թ. սեպտեմբերին արձանագրվեցին լուրջ հարձակումներ, որոնք ուղղորդվում էին պետական կառույցների կողմից: Այդ ժամանակ ադրբեջանական կողմը չէր անում դա, այլ վարձվում էին կիբեռհանցագործ խմբեր ԱՊՀ տարածքում: Սակայն վերջին երկու տարիներին արձանագրվել են դեպքեր, որոնց հիման վրա կարելի է հստակ եզրակացնել, որ Բաքուն արդեն ունի իր պետական կիբեռհարձակողական միավորումը[1]: Նաև հարկ է

[1] *Սամվել Մարտիրոսյան*, Ադրբեջանի հնարավոր հաքերային ներուժի մասին, http://www.armcsr.com/wp-content/uploads/2018/08/%D5%8D%D5%A1%D5%B4%D5%BE%D5%A5%D5%AC-%D5%84%D5%A1%D6%80%D5%BF%D5%AB%D6%80%D5%B8%D5%BD%D5%B5%D5%A1%D5%B6.pdf

նշել, որ ադրբեջանական հաքերային խմբավորումները ստանում են արտաքին աջակցություն: Օրինակ, մի շարք ազգայնական թուրքական հաքերային խմբավորումներ օգնում են Ադրբեջանին իրականացնել հարձակումներ Հայաստանի դեմ:

դ. Երկրի և ընդհանուր աշխարհի զարգացումները կիբեռտիրույթում նորանոր վտանգների առջև են կանգնեցնում: Յուրաքանչյուր ենթակառուցվածքի թվայնացում առաջացնում է խոցելիություն, յուրաքանչյուր բարեփոխում ստեղծում է հարձակումների համար նոր հնարավորություններ: Այսօրվա պաշտպանողական միջոցները վաղն արդեն չեն աշխատում կամ թերի են:

Ընդհանուր պատկերը խոսում է այն մասին, որ Հայաստանի Հանրապետության կիբեռտարածքը խոցելի է և հետզհետե ավելի խոցելի է դառնում, և հնարավոր լուրջ հարձակումների հետևանքները նույնիսկ դժվար է գնահատել, քանի որ գնահատականի համար պետք է ունենալ իրավիճակի ընդհանրացված պատկեր: Իսկ դրա մեխանիզմներն այսօր պետությունը չունի:

ԶԼՄ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ «ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ» ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Դիանա Գալստյան[*], *Լիլիթ Հակոբյան*[**]

Վերջին տարիների հետազոտություններն արձանագրում են «ատելության խոսքի» (*hate speech*) աճ ժամանակակից մեդիաների բովանդակության մեջ: Մինչդեռ մեդիաների դերի մասին պատկերացումներն այս հարցում կարելի է բաժանել երկու խմբի. առաջին խմբի ներկայացուցիչները գտնում են, որ ԶԼՄ-ով տարածվող ատելությունը տեղափոխվում է հասարակություն, մյուսները գտնում են, որ ԶԼՄ-ն արտացոլում են հասարակության մեջ առկա տրամադրությունները: Այնուամենայնիվ, չի կարելի թերագնահատել ԶԼՄ դերն այս հարցում, որոնք կարող են մեղմել հասարակության ներսում առկա լարվածությունը և հակառակը:

«Ատելության խոսքը» տարբեր ձևակերպումներ ունի, օրինակ՝ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի հանձնարարականներում՝ թիվ R (97) 20-ի հավելվածում տրված է հետևյալ ձևակերպումը. որպես լրատվամիջոցներով տարածվող ատելության խոսք «պետք է հասկանալ բոլոր այն արտահայտությունները, որոնք տարածում, հրահրում և արդարացնում են ռասայական ատելություն, քսենոֆոբիա, հակասեմիտիզմ և անհանդուրժողականության բոլոր այլ ձևերը, ինչպիսիք են՝ ագրեսիվ ազգայնականության և էթնոցենտրիզմի միջոցով արտահայտվող անհանդուրժողականությունը, խտրականությունը փոքրամասնությունների, միգրանտների հանդեպ»[1]: Մեկ այլ ձևակերպմամբ՝ «ատելության խոսք» տերմինի տակ հասկացվում են «ԶԼՄ-ում հրապարակվող այն բոլոր տեքստերը, ինչպես նաև վերնագրերը, նկարները, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով կարող են ազգային կամ կրոնական թշնամանքի կամ նույնիսկ անբարյացակամ վերաբերմունքի պատճառ դառնալ»[2]:

Անկախ սահմանումից՝ հստակ է, որ ատելության խոսքն ունի պարտադիր 2 բաղադիչ՝ բացասական երանգավորում և կոնկրետ հասցեատեր: Վերջինով էլ պայմանավորված են դրա հիմնական տարատեսակները՝ էթնիկ,

---

[*] «Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի ղեկավարի տեղակալ:
[**] «Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի փորձագետ:

[1] «Զանգվածային տեղեկատվության բնագավառը Եվրոպայի խորհրդի փաստաթղթերում» (երկրորդ՝ լրացված հրատարակություն), Երևան, 2003թ., էջ 132:

[2] *Спожакина А.И.,* «Язык вражды» в региональных СМИ (российско-украинский конфликт в оценке журналистов Оренбуржья).

ներքաղաքական, միջազգային, սոցիալական, լեզվական, կրոնական, սեռական և այլն: Այն կարող է ուղղված լինել մեկ օբյեկտի (օրինակ՝ պայմանավորված մաշկի գույնով) կամ միաժամանակ ներառել տարբեր օբյեկտներ՝ սեռական կողմնորոշմամբ, կրոնով, ազգային պատկանելությամբ և այլն: Ատելության խոսքը հաճախ կառուցվում է «մենք-նրանք» հակադրության վրա, երբ առավել դրական երանգավորմամբ բնորոշվում է «մենք»-ը, բացասական երանգավորմամբ՝ «նրանք»-ը:

«Ատելության խոսքը» կարող է լինել բացահայտ՝ դրսևորվել կոնկրետ բառերով, բառակապակցություններով ու նախադասություններով, ինչպես նաև թաքնված՝ շարադրանքի ընդհանուր տրամաբանությունից բխող բացասական ենթատեքստով: Բացահայտ դրսևորումները կարելի է դասակարգել 3 պայմանական խմբերում.

- «Կոշտ». հաճախ ուղեկցվում է բռնության և խտրականության բացահայտ կոչերով:
- Ոչ այնքան կոշտ՝ «միջին». օրինակ՝ այս կամ այն էթնիկ խմբի նկատմամբ պատմության ընթացքում իրականացված հանցագործությունների «արդարացում» կամ հասարակության, պետության վրա տվյալ էթնիկ խմբի բացասական ազդեցության մատնանշում և այլն:
- Համեմատաբար «փափուկ». օրինակ՝ այս կամ այն խմբի բացասական կերպարի ձևավորում, բացասական վարքի, գործած հանցանքի դեպքում հատուկ շեշտադրվում է խմբային կամ կրոնական պատկանելությունը, որը հաճախ կապ չունի տվյալ նյութի հետ[3]:

«Ատելության խոսքի» բացահայտմանն ուղղված հետազոտությունները հիմնականում կարևորվում են՝ պարզելու համար.

- դրսևորման հիմնական հարթակները (թերթեր, հեռուստատեսություն, առցանց լրատվամիջոցներ, սոցցանցեր),
- մատուցման ձևերը, առանձնահատկությունները (բացահայտ, ծածուկ՝ բացասական ենթատեքստով),
- հիմնական աղբյուրները (լրագրող, քաղաքական գործիչ, փորձագետ և այլն),
- թիրախները (ըստ տեսակի դրանք տարբեր են՝ կրոնական, էթնիկ, սոցիալական խմբի ներկայացուցիչներ[4]):

[3] Язык вражды против общества (сб. статей) / сост.: А.Верховский, стр. 73.
[4] "Язык вражды" в СМИ Южного Кавказа, http://ypc.am/studies/%D5%A1%D5%BF%D5%A5%D5%AC%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%AD%D5%B8%D5%BD%D6%84%D5%A8-%D5%B0%D5%A1%D6%80%D5%A1%D5%BE%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%AF%D5%B8%D5%BE%D5%AF%D5%A1%D5%BD%D5%AB-%D5%A6/?lang=hy

«Ատելության խոսքի» դրսևորումները մեդիայում փորձագետները պայմանավորում են մի քանի գործոններով.

- լրագրողական պրոֆեսիոնալիզմի բացակայություն, լրագրողական էթիկայի խախտում,
- տվյալ լրատվամիջոցի միտումնավոր քաղաքականության արդյունք, վարկանիշի բարձրացման, լսարան գրավելու միտում,
- քաղաքական նպատակին հասնելու միջոց (այս հանգամանքը հաճախ դրսևորվում է ներքաղաքական իրադարձությունների լուսաբանման ժամանակ),
- նպատակաուղղված պետական քարոզչություն:

«Ատելության խոսքը» մեդիայում ընդհանուր խնդիր է: Այն տարածված է փոքր լսարան ունեցող տեղի լրատվամիջոցներում, ինչպես նաև միջազգային խոշոր լրատվամիջոցներում և հիմնականում հանդիպում է ազգամիջյան, կրոնական և միգրացիայի թեմաների լուսաբանումներում: Օրինակ՝ ռուսական լրատվամիջոցներում այն հիմնականում վերաբերում է Միջին Ասիայից, ինչպես նաև անդրկովկասյան պետություններից ներգաղթյալներին: Արևմտյան ԶԼՄ-ում «ատելության խոսքի» ձևակերպումները ևս առնչվում են միգրանտների թեմային և հատկապես սուր են դրսևորվում կրոնական՝ իսլամական համատեքստում[5]:

ԶԼՄ-ում էթնիկ հողի վրա ատելության խոսքի ձևավորման բացահայտ օրինակ են Ադրբեջանի առցանց լրատվամիջոցների թեմատիկ անդրադարձները Հայաստանի և հայերի մասին: Վերջիններս բավական մեծ ծավալով առկա են ամենօրյա լրահոսում՝ ոչ միայն հակամարտության վերաբերյալ նյութերում, այլև այլ ոլորտներին առնչվող նորություններում՝ սպորտային, մշակութային, տնտեսական և այլն: Ինչպես նշվեց, «ատելության խոսքն» ունի հստակ հասցեատեր, այս դեպքում որպես հասցեատեր ադրբեջանական լրատվամիջոցներում հանդես են գալիս *«Հայաստանը՝ որպես պետություն», «ՀՀ իշխանությունները», «հայերը/ՀՀ քաղաքացիները/հայկական սփյուռքը»:* Ադրբեջանական մեդիայում թշնամու կերպարը ձևավորվում է և՛ Հայաստան պետության, և՛ ավելի շատ հայ ժողովրդի, հայերի շուրջ, որն ամրապնդվում է հետևյալ բացասական բնութագրիչներով՝ *фашисты, террористы, бандиты, убийцы, головорезы, варвары, националисты, дезертиры, шовинисты, агрессоры, захватчики, преступники, оккупанты, палачи, лжеци, нелюди, вероломные соседи*[6]:

[5] https://mediastancia.com/specproject/4718/

[6] *Լիլիթ Հակոբյան*, Հայի՝ որպես թշնամու կերպարի ձևավորման առանձնահատկությունները, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=13762&sphrase_id=51180

Ընդհանուր առմամբ, կարող ենք ասել, որ «ատելության խոսքի», թշնամու կերպարի ձևավորման դրսևորումներ առկա են և՛ Հայաստանի, և՛ Ադրբեջանի լրատվամիջոցներում: Հետաքրքրական է, որ հայկական մեդիայում առավել վառ արտահայտված է Ադրբեջանի՝ որպես թշնամի պետության կերպարը, սակայն այն ընթանում է հիմնականում առանց ադրբեջանցի ժողովրդի դեմ ագրեսիայի ակնհայտ կոչերի, ինչը վառ դրսևորվում է ադրբեջանական մեդիայում:

Ադրբեջանի կերպարի աշխարհաքաղաքական, սոցիալ-տնտեսական, ներքաղաքական բաղադրիչները համեմատելով ադրբեջանական մեդիայի կողմից Հայաստանի կերպարի համապատասխան բաղադրիչների հետ՝ կարող ենք նշել, որ ադրբեջանական տեքստերում Հայաստանը ներկայացված է որպես *«քաղաքական, տնտեսական, ռազմական, ժողովրդագրական, կրթական և այլ ոլորտներում բազմաթիվ խնդիրներ ունեցող, Ռուսաստանից համակողմանի կախյալ վիճակում գտնվող, կործանման եզրին գտնվող պետություն»:* Որպես հիմնական աղբյուրներ հանդես են գալիս պետական պաշտոնյաները, լրագրողները, փորձագետները, ինչպես նաև հասարակության տարբեր շերտերի ներկայացուցիչներ (ինչը երևում է նաև հոդվածներն ընթերցողների առցանց մեկնաբանություններից): Վերջին տարիներին ադրբեջանական մեդիայի բովանդակության մեր ուսումնասիրությունները[7] թույլ են տալիս արձանագրել, որ սա Ադրբեջանի կողմից իրականացվող ուղղորդված պետական քաղաքականություն է:

Ամփոփելով նշենք, որ «ատելության խոսքի» տարբեր տեսակների մշտական կիրառումը բացասական հետևանքներ է ունենում ցանկացած հասարակության համար, պարունակում է թշնամական դիսկուրսի զարգացման պոտենցիալ, դառնում է սովորական և լայնորեն օգտագործվում, օրինակ, ներքին խնդիրների լուսաբանման, իշխանությունների և առհասարակ սեփական խնդիրները ներկայացնելու ժամանակ: Այն նպաստում է կարծրատիպերի ձևավորմանը, ինչպես նաև մեծացնում է հասարակության տարբեր շերտերի միջև բևեռացումը: Բացի այդ, կարող է ատելության հիմքի վրա հանցագործությունների աճի պատճառ դառնալ:

[7] Տե՛ս, օրինակ, «Ադրբեջանի հակահայկական տեղեկատվական համակարգը», http://www.noravank.am/upload/pdf/book.pdf,
Լիլիթ Հակոբյան, «Հայի՝ որպես թշնամու կերպարի ձևավորման առանձնահատկությունները», http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=13762&sphrase_id=51180,
Դիանա Գալստյան, «Մանիպուլյացիոն հնարքներն ադրբեջանական քարոզչությունում», http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=13500&sphrase_id=68889

ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ԱՐԲԱՆՅԱԿԱՅԻՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
Մաս Բ. Վերգետնյա բաղադրիչ, սեփական արբանյակների ստեղծում

Արա Հ. Մարջանյան[*]

Սույն հոդվածի առաջին մասում դիտարկվել էին Ղազախստանի Հանրապետության (ՂՀ) արբանյակային խմբավորման ունակությունները: Ստորև հակիրճ դիտարկվում են ՂՀ արբանյակային վերգետնյա ենթակառուցվածքը, սեփական արբանյակների ստեղծման հզորությունները և բարձր ճշգրտության արբանյակային նավիգացիոն ցանցը:

ՂՀ արբանյակային վերգետնյա ենթակառուցվածքը համախմբված է ՂՀ Կոսմիկական կապի կենտրոն բաժնետիրական ընկերությունում (ՂՀ ԿԿԿ ԲԸ)[1] և ներկայում կազմված է արբանյակների ղեկավարման «Ակկոլ»՝ հիմնական (տե՛ս *Նկ. 1*) և «Կոկտերեկ» պահեստային (տե՛ս *Նկ. 2*) կենտրոններից: ՂՀ սեփական արբանյակների ստեղծման հզորությունները ներկայում համախմբված են «ՀՖՀ» ԱԲԸ ենթակայության ներքո գործող ֆրանս-ղազախական «Ղալամ» համատեղ ձեռնարկությունում (ТОО «Ғалам»): 2016-ից բոլոր այս կառույցները գործում են ՂՀ Պաշտպանական և աերոկոսմիկական արդյունաբերության նախարարության (ՊԱԱՆ) Աերոկոսմիկական կոմիտեի ենթակայության տակ:

Սույն հոդվածում մեր դիտարկումներից դուրս է գտնվում ուղեծրային արձակումների ՂՀ սեփական կարողություններին ուղղված ջանքերի զննությունը, ինչպես նաև ՂՀ արդի կոսմիկական գործունեության ընդհանուր վերլուծությունը, դրա ակունքների, ձևավորման առանձնահատկությունների և աշխարհաքաղաքական տրամաբանության քննությունը: Այս հարցերի դիտարկմանը՝ կատարված տարածաշրջանում և աշխարհում ընթացող գործընթացների ֆոնին, կանդրադառնանք առանձին հոդվածով:

1. Արբանյակային վերգետնյա բաղադրիչ

ՂՀ Կոսմիկական կապի կենտրոն բաժնետիրական ընկերությունը կազմվել է

[*] «Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն, տ.գ.թ.:

[1] Լրիվ անվանումն է՝ «*АО Республиканский центр космической связи и электромагнитной совместимости радиоэлектронных средств*»:

2004թ. մարտի 18-ին, ՂՀ կառավարության 2003թ. դեկտեմբերի 30-ի №1355 որոշման հիման վրա: 2012թ. մայիսի 31-ին ՂՀ կառավարության №721 որոշմամբ ՂՀ ԿԿԿ-ն նշանակվել է կոսմիկական կապի ազգային օպերատոր, որը կոչված է լուծելու հետևյալ խնդիրները.

1. Կոսմիկական կապի և հեռահաղորդակցության համակարգերի տեխնիկական շահագործման ապահովում;
2. Ֆիզիկական և իրավաբանական անձանց արբանյակային տրանսպոնդերների մատակարարման ծառայության իրականացում:

Դատելով բաց աղբյուրներից՝ կարելի է եզրակացնել, որ մինչև 2016թ. այն գործում էր 2005-ին հիմնադրված ՂՀ «*Казкосмос*» Կոսմիկական ազգային գործակալության ենթակայության տակ[2], որն իր հերթին ենթակա էր ՂՀ կառավարությանը՝ ի դեմս ՂՀ Ներդրումների և զարգացման նախարարության: 2016-ին հիմնվեց ՂՀ Պաշտպանական և աերոկոսմիկական արդյունաբերության նախարարությունը, որի կազմում հիմնվեց ՂՀ Աերոկոսմիկական կոմիտեն (ՂՀԱԿ), և ԿԿԿ ԲԸ-ն փոխանցվեց այս կոմիտեի ենթակայությանը:

Արբանյակների ղեկավարման, կապի և մոնիթորինգի ՂՀ վերգետնյա առաջին և հիմնական կենտրոնը՝ «Ակկոլ» կոսմիկական կապի կենտրոնը (ՑԿՏ «*Акколь*») շահագործման է հանձնվել 2005թ. դեկտեմբերին: Այն գտնվում է Աստանայից մոտ 100 կմ դեպի հյուսիս՝ A-1 մայրուղուց և Ակկոլ (*Акколь*, *Akkul*) ավանից արևմուտք: Հիմնական նպատակն է «*KazSat*» արբանյակների ղեկավարումը, հսկումը և աշխատանքային բալիստիկ ու տեխնիկական բնութագրերի ապահովումը: Կենտրոնի բոլոր համակարգերը նախատեսված են անընդհատ և ավտոնոմ շահագործման համար: «Ակկոլ» ԿԿԿ-ն մոդեռնիզացվել է 2008-10թթ.՝ «*KazSat-2*», և 2013-ին՝ «*KazSat-3*» արբանյակային ծրագրերի շրջանակում: Կենտրոնի կազմում են գտնվում արբանյակների ղեկավարման, մշտադիտարկման, ծրագրաապարատային և օդերևութաբանական ապահովման, ենթակառուցվածքի սպասարկման համակարգերը[3]:

Արբանյակների ղեկավարման 2-րդ՝ պահեստային «Կոկտերեկ» ԿԿԿ-ն (ՑԿՏ «*Коктерек*») գտնվում է Ալմաթիից մոտ 120 կմ դեպի հյուսիս՝ A-3 «Ալմաթի-Քաշագայ» մայրուղուց 1 կմ արևելք, Բայսերկե (*Байсерке, Baiserke*) ավանի տրավերսում: Հիմնման տարեթիվը ՂՀ ԿԿԿ պաշտոնական կայքում[4]

[2] Հիմնված է 2005թ. մարտի 17-ին ՂՀ նախագահի № 242 հրամանագրով, որպես Ազգային բաժնետիրական ընկերություն (ԱԲԸ, АО «*Национальная компания «Казкосмос*»): Վերանվանված է որպես «Қазақстан Ғарыш Сапары» ԱԲԸ՝ 2007թ. օգոստոսի 2-ին, ՂՀ ԱԿԳ № 32 հրամանով:

[3] http://www.rcsc.kz/index.php/o-kompanii/podrazdeleniya/tsentr-kosmicheskoj-svyazi-akkol

[4] http://www.rcsc.kz/index.php/o-kompanii/podrazdeleniya/tsentr-kosmicheskoj-svyazi-kokterek

և այլ բաց աղբյուրներում չի նշվում: Նշվում է միայն, որ այն արդիականացվել և շահագործման է հանձնվել 2013թ. հունիսի 28-ին՝ «*KazSat-3*» ծրագրի շրջանակներում: Համաձայն պաշտոնական աղբյուրների, այն ստեղծվել է որպես գործող՝ «Ակկոլ» ԿԿԿ անալոգ, նպատակ ունենալով ապահովել «*KazSat*» սերիայի ԿՀ արբանյակների պահեստային ղեկավարումը, հսկումը, բալիստիկ և տեխնիկական բնութագրերի ապահովումը, ինչպես նաև *Телепорт* ծառայությունների (*Pre-hubbing, Colocation, Last-mile*) մատուցումը:

Նկար 1

ՂՀ կոսմիկական կապի հիմնական՝«Ակկոլ» կենտրոնը (վերևում), խոշորամասշտաբ արբանյակային լուսանկարը և ընդհանուր պատկերը (ներքևում)

Նկար 2

ՂՀ կոսմիկական կապի պահեստային՝ «Կոկտերեկ» կենտրոնը (վերևում), խոշորամասշտաբ արբանյակային լուսանկարը և ընդհանուր պատկերը (ներքևում)

Դատելով «Կոկտերեկ» ԿԿԿ արդիականացման ժամկետից (2013թ. հունիս)՝ կարելի է եզրակացնել, որ այն կարող է դիտարկվել նաև որպես ՂՀ ՀԵՀ արբանյակների ղեկավարման կենտրոն [1]: Սակայն այն հանգամանքը, որ ԿՀ «*KazSat-3*» և ՀԵՀ «*KazEOSat-1*» արբանյակների արձակման ժամկետների՝ իրար մոտ լինելը (2014թ. ապրիլի 28 և ապրիլի 30՝ համապատասխանաբար, դժվարացնում է որոշակի եզրահանգումների կատարումը: Բոլոր դեպքերում, պաշտոնական և այլ բաց աղբյուրներում ՀԵՀ արբանյակների ղեկավարման հատուկ կամ առանձնացված կենտրոնի մասին որևէ տվյալ չկա:

2. Սեփական արբանյակների ստեղծման հզորությունները

Սեփական արբանյակային ունակություններին նվիրված աշխատանքները ՂՀ-ն ի սկզբանե կենտրոնացրել էր առաջին հերթին ՀԵՀ բաղադրիչի ուղղությամբ [1]: 2005-06թթ. այս ջանքերը կապված էին ՌԴ-ի հետ: Սակայն 2009-ին Ֆրանսիայի նախագահ Ն.Սարկոզիի ՂՀ պետական այցից հետո Ղազախստանում այս ուղղությամբ ռազմավարական վերուղղորդում կատարվեց դեպի Ֆրանսիա և *Airbus Space Defence/EADS Astrium* կորպորացիա: Նույն 2009-ին հիմնադրվեց ֆրանս-ղազախական «Ղալամ» սահմանափակ պատասխանատվությամբ բաժնետիրական ընկերություն» համատեղ ձեռնարկությունը (ТОО «*Ғалам*»): «Ղալամ»-ի հիմնադիր կապիտալի 72%-ը պատկանում է «ҚҒС» ԱԲԸ-ին, 27.5%-ը՝ «*Airbus Space Defence*»-ին: Բաց աղբյուրները նշում են, որ մնացյալ 0.5%-ը պատկանում է «ՂՀ պետությանը»: Պաշտոնական աղբյուրները[5] նշում են, որ այն պատկանում է «*Kazkosmos*» պետական ընկերությանը: Իրականում, սկսած 2016-ից՝ այդ 0.5%-ը պատկանում է ՂՀ Պաշտպանական և աերոկոսմիկական արդյունաբերության նախարարությանը, ավելի ճշգրիտ՝ դրա ենթակայության տակ գործող «ҚҒС» ՂՀ Կոսմիկական գործակալությանը: Իսկ մինչ այդ այն, հավանաբար, պատկանում էր ՂՀ Պաշտպանության նախարարությանը[6]:

Այսօրինակ խճողված վարչական համակարգը ճշգրտորեն կրկնում է Ադրբեջանի օրինակը՝ իր «*AzerKosmos*» գործակալությամբ և Ադրբեջանի Պաշտպանական արդյունաբերության նախարարությամբ [2]: Այսպիսի գործելակերպը, հավանաբար, կոչված է, մի կողմից, քողարկել ազգային կոսմիկական գործակալությունների (հատկապես դրանց ՀԵՀ բաղադրիչի) պատկանելությունը պաշտպանական համակարգին, մյուս կողմից՝ փորձ է տարանջատել պետության ֆինանսական ներգրավվածությունն ու պատասխանատվությունը յուրօրինակ միջնորմ հանդիսացող «ղեկավարող ընկերության» միջոցով:

Դատելով բաց աղբյուրներից՝ կարելի է եզրակացնել, որ «Ղալամ» համատեղ ձեռնարկության (ՀՁ) հիմնական նպատակն է գոյացնել արբանյակների մշակման, հավաքման և ստեղծման սեփական ունակություններ, ինչը նախատեսվում էր դեռ 2005-ին ՂՀ-ում ընդունված կոսմիկական տեխնիկայի զարգացման պետական ծրագրով (դրա *Проект «Создание сборочно-испытательного комплекса Космических аппаратов» (СбИК КА*) կետով): *СбИК КА*

[5] http://www.ghalam.kz/index.php?lang=en

[6] Այլ ոչ թե ՂՀ Ներդրումների և զարգացման նախարարությանը, որի ենթակայության տակ էր մինչև 2016թ. գտնվում «ҚҒС»-ն:

համալիրի կառուցման համար Աստանայի ձախափնյա հատվածում հատկացվեց 30 հա տարածք, ուր և պետք է կառուցվեր *СбИК КА* գործարանային կորպուսը: Շինմոնտաժային ընդհանուր ծախսերը հասնում էին մոտ €128 մլն-ի, որի մոտ մեկ երրորդը պետք է տրամադրեր *EADS Astrium* ընկերությունը: Ենթադրվում էր, որ *СбИК* ապագա հզորությունների 66%-ը կհատկացվի ՂՀ ներքին շուկային, իսկ 34%-ը՝ արբանյակների միջազգային շուկայի կարիքներին: Ընդ որում, ֆրանսիական կողմը պարտավորվում էր հզորությունների թողարկման պահից 5 տարվա ընթացքում ներգրավել մոտ €60 մլն ընդհանուր արժողությամբ պատվերներ:

2009-ին պլանավորվում էր, որ *СбИК КА* կառուցումը կավարտվի 2012-ին, իսկ ՀԵՀ բաղադրիչով առաջին ղազախական արբանյակները կգործեն 2014-ին[7]: Այս մասով ֆրանս-ղազախական ռազմավարական համագործակցության նպատակն իրականացվել է. ղազախական առաջին ՀԵՀ երկու արբանյակները դուրս բերվեցին ուղեծիր 2014-ի ապրիլի 30-ին և հունիսի 19-ին՝ համապատասխանաբար [1]:

Սակայն համագործակցության առաջին նպատակը կարելի է խափանված համարել: Այսպես, 2017թ. հունիսի դրությամբ *СбИК КА* կառուցումն ավարտված չէր: 2017թ. հունիսի 16-ին ՂՀ ՊԱԱՆ խոսնակի հաղորդմամբ, կառուցման ավարտը նախատեսվում է 2018-ին[8]: Նույն հաղորդագրությունում առաջին անգամ հրապարակվեցին նաև ***СбИК КА*** նախագծային հզորությունների մասին որոշ տեղեկություններ: ***СбИК КА*-ն** հնարավորություն պետք է ընձեռի միաժամանակ պատրաստել մեծ դասի երկու արբանյակ կամ միջին դասի երեք արբանյակ, **100 կգ-ից մինչև 6 տ զանգվածով**: Մեկ արբանյակի պատրաստման միջին տևողությունը 4 տարի է: Նախատեսվում է, որ ***СбИК КА*-ում կպատրաստվեն ինչպես ԿՀ, այնպես էլ ՀԵՀ և նույնիսկ՝ ռադարային ՀԵՀ արբանյակներ[9]: Սակայն 2018թ. հունիսի դրությամբ** ՂՀ Կոսմիկական «ԿՖՇ» գործակալության, «Ղալամ» ՀՁ և ՂՀ ՊԱԱՆ և այլ պաշտոնական կայքերում և բաց մամուլում բերվող բոլոր լուսանկարները կատարված են կամ *Airbus Space Defence/EADS Astrium* կորպորացիայի՝ Թուլուզում գտնվող մասնաշենքում (Ֆրանսիա), կամ *Airbus Space Defence*-ին պատկանող *Surrey Satellite Tech. Ltd.* ընկերությունում (Անգլիա): Այսօրվա դրությամբ «Ղալամ» ՀՁ արբանյակային պորտֆելում է գտնվում

[7] http://expert.ru/kazakhstan/2009/40/kosmos/

[8] https://lsm.kz/skol-ko-kazahstan-smozhet-proizvodit-kosmicheskih-sputnikov: 2018թ հոկտեմբերի դրությամբ այն դեռ ավարտված չէր:

[9] Այսպես, 2018թ. ապրիլի 18-ին ՂՀ ՊԱԱՆ նախարար Բ.Ատամկուլովը հայտնեց, որ մինչև 2022թ. Ղազախստանը պատրաստվում է արձակել ՀԵՀ ռադարային արբանյակ, https://ru.sputniknews.kz/space/20180418/5333909/sputnik-rentgen-kazakhstan-2022.html

երկու արբանյակ, երկուսն էլ պատրաստված «Ղալամ» ՀՁ և *Surrey Satellite Tech. Ltd.* (SSTL) ընկերության միջև 2013թ. հուլիսի 1-ին ստորագրված համաձայնագրի շրջանակներում[10]:

Նկար 3
50 կգ զանգվածով KazSTSat ցածր դասի ՀԵՀ արբանյակը Surrey Satellite ընկերությունում



Առաջինը 17.4 մ տարածական լուծումով ցածր դասի 50 կգ զանգվածով «*KazSTSAT*» ՀԵՀ արբանյակն է՝ պատրաստված *Surrey Satellite* ընկերության ունիֆիկացված պլատֆորմի վրա (տե՛ս *Նկ. 3*): Համաձայն *SSTL* ընկերության պաշտոնական կայքի՝ արբանյակում կօգտագործվեն նոր հաշվիչ և մի շարք համատեղ մշակված սարքավորումներ: Պլատֆորմի ուղեծրային էլեկտրական միջին հզորությունը՝ 50 Վտ[11]: 2017թ. օգոստոսի 1-ին ՌԴ-ում *Airbus Space Defence* ընկերության ներկայացուցչության ղեկավար Վլադիմիր Տերեխովը հայտնեց, որ *KazSTSAT* արբանյակի արձակումը պլանավորված է իրականացնել 2018-ին, ԱՄՆ *SpaceX* մասնավոր ընկերության *Falcon 9* հրթիռային կրիչով[12]:

Մյուս արբանյակը մոտ 5 կգ զանգվածով *cubesat* դասի նանոարբանյակ է՝ նախատեսված իոնոսֆերային հետազոտությունների համար, մշակված է *SSTL* ընկերության, «Ղալամ» ՀՁ-ի և Սուրրեյի համալսարանի (Անգլիա) մասնագետների կողմից:

Աղբյուրներ և գրականություն

1. *Մարջանյան Ա.Հ.*, Ղազախստանի արբանյակային ունակությունները, Մաս Ա., Ուղեծրային խմբավորում, «Գլոբուս», 9 (98), 2018:
2. *Մարջանյան Ա.Հ.*, Ադրբեջանի տիեզերական տեխնոլոգիական սեգմենտը, «Գլոբուս», 1 (90), 2018:

[10] https://www.sstl.co.uk/space-portfolio/missions-in-build
[11] Ինչից կարելի է եզրակացնել, որ համատեղ մշակումները կապված են հիմնականում արբանյակի էլեկտրական սնուցման և, հավանաբար, ՖՎ պանելների հետ:
[12] Մինչև 2018թ. հոկտեմբերի վերջ այն չի իրականացվել:

ԷՐԴՈՂԱՆԻ «ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ» ՇՈՒՐՋ

Հայկ Գաբրիելյան[*]

2018թ. հոկտեմբերի վերջին ամերիկյան *Bloomberg* գործակալությունը մի հոդված հրապարակեց այն մասին, թե մի շարք երկրներում որքան երկար իշխանության ղեկին կարող են մնալ նրանց առաջնորդները: Թուրքիայի մասով նշված էր, որ նրա ներկայիս նախագահ, 64-ամյա Ռեջեփ Թայիփ Էրդողանը կարող է նախագահի պաշտոնում մնալ մինչև 2033թ.: Հոդվածում հիշեցվում էր, որ Էրդողանը ժամանակակից Թուրքիայի ամենաերկար կառավարած առաջնորդն է (2003-2014թթ. Էրդողանը Թուրքիայի վարչապետն էր), որը 2014թ. դարձել է ժողովրդի ուղիղ քվեարկությամբ ընտրված Թուրքիայի առաջին նախագահ: Հոդվածում հիշեցվում էր, որ Էրդողանը Թուրքիայի նախագահի պաշտոնում ընտրվել է 2018թ. հունիսին և Սահմանադրության համաձայն՝ կարող է նախագահի պաշտոնում մնալ մինչև 2028թ.: Սակայն եթե Էրդողանն իր նախագահական երկրորդ ժամկետի ավարտից առաջ նշանակի արտահերթ ընտրություններ, ապա կկարողանա նախագահի պաշտոնում մնալ մինչև 2033թ.[1]:

Bloomberg-ի այս հրապարակման հետ կապված՝ նշենք, որ մեր նախկին հոդվածներից մեկում[2] նույնպես նշել ենք, որ Էրդողանը սահմանադրական բարեփոխումների շնորհիվ հնարավորություն է ստանում Թուրքիայի նախագահի պաշտոնում մնալ մինչև 2033թ., թեև այն ժամանակ դեռ հայտնի չէր, որ Թուրքիայի առաջիկա նախագահական ընտրություններն անցկացվելու են 2018թ. հունիսի 24-ին: Այստեղ կատարենք պատմական մի փոքր էքսկուրս. 2014թ. Էրդողանը Թուրքիայի նախագահի պաշտոնում ընտրվեց 5 տարի ժամկետով՝ ևս մեկ անգամ նույն ժամկետով վերընտրվելու հնարավորությամբ («5+5»): Ստացվում է, որ նա կարող էր Թուրքիայի նախագահի պաշտոնը զբաղեցնել մինչև 2024թ.: Սակայն 2017թ. ապրիլի սահմանադրական բարեփոխումների հանրաքվեի (ՍԲՀ) արդյունքները («այո»՝ 51,41%, «ոչ»՝ 48,59%) Էրդո-

[*] Թուրքագետ, ՄԱՀՀԻ ասոցացված փորձագետ:

[1] Ben Sills and Patricia Suzara, World Leaders' Political Health Check, Bloomberg, 31.10.2018.

[2] *Հայկ Գաբրիելյան,* Սահմանադրական բարեփոխումների հանրաքվեն Թուրքիայում, ՄԱՀՀԻ, 22.04.2017:

ղանին հնարավորություն էին տալիս Թուրքիայի նախագահի պաշտոնում մնալ մինչև 2029թ. («5+5») և անգամ մինչև 2034թ.: ՍԲՀ-ով որոշվել էր նախագահական ընտրություններն անցկացնել 2019թ. նոյեմբերի 3-ին (Էրդողանի գլխավորած «Արդարություն և զարգացում» կուսակցությունը (ԱԶԿ) իշխանության է եկել 2002թ. նոյեմբերի 3-ի խորհրդարանական ընտրությունների արդյունքներով): Սակայն 2017թ. ապրիլին՝ ՍԲՀ-ից քիչ անց, Էրդողանը երկրում նշանակեց արտահերթ նախագահական և խորհրդարանական ընտրություններ (դրա դրդապատճառներին անդրադարձել ենք մեր նախորդ հոդվածներից մեկում[3]), որոնցում հաղթելով՝ նա Թուրքիայի նախագահի պաշտոնում կարող է մնալ մինչև 2023թ. (Թուրքիայի Հանրապետության հիմնադրման 100-ամյակ), իսկ վերընտրվելու դեպքում՝ մինչև 2028թ.: Այսինքն՝ ՍԲՀ-ի շնորհիվ «5+5» հաշվարկը սկսվում է ոչ թե 2014-ից, այլ 2018-ից:

Սակայն սա ամենը չէ: ՍԲՀ կետերից մեկով որոշվել է այսուհետ խորհրդարանական և նախագահական ընտրություններն անցկացնել 5 տարին մեկ անգամ և նույն օրը: Ընդ որում՝ արտահերթ ընտրություններ անցկացնելու իրավունքն ընձեռվել է թե՛ երկրի նախագահին, թե՛ խորհրդարանին: Խորհրդարանը տվյալ որոշումը պետք է ընդունի 3/5-ի աջակցությամբ, և եթե դա անի երկրի նախագահի կառավարման երկրորդ շրջանում, ապա վերջինս ևս մեկ անգամ կստանա վերընտրման իրավունք: Արդյունքում՝ ստացվում է, որ Էրդողանի նախագահական ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 2033թ., եթե 2028թ. խորհրդարանը (կամ Էրդողանը) որոշի անցկացնել արտահերթ ընտրություններ:

Այժմ պարզաբանենք, թե ինչու 1,5 տարվա վաղեմության մեր և *Bloomberg*-ի ներկայիս հոդվածներում համընկան Էրդողանի «քաղաքական առողջության» ժամկետները (2033թ.) այն դեպքում, երբ մեր հոդվածի հրապարակման ժամանակ հայտնի չէր, որ 2018թ. Թուրքիայում անցկացվելու են նախագահական արտահերթ ընտրություններ: Կարծում էինք (ենք), որ Էրդողանը (ֆորսմաժորների բացակայության դեպքում) նախագահի պաշտոնում կմնա մինչև 2029թ. և արտահերթ ընտրություններ անցկացնելու որոշումը կընդունի ոչ թե 2029թ.՝ այսինքն իր հնարավոր պաշտոնավարման ժամկետից ամիսներ առաջ, այլ գոնե մեկ տարի առաջ՝ 2028թ., որպեսզի ակնառու չդառնա իշխանության ղեկին հնարավորինս երկար մնալու իր տենչը: Եվ բացի այդ, ի տարբերություն 2034թ.՝ 2033թ. ունի որոշակի խորհրդանշական իմաստ (Մուհամեդ մարգարեի մահվան 1400-ամյակ, ԹՀ հիմնադրման 110-ամյակ):

[3] *Հայկ Գաբրիելյան,* Արտահերթ ընտրությունների նշանակումը Թուրքիայում, ՄԱՀՀԻ, 26.04.2018:

Այսպիսով, Էրդողանը ՍԲՀ-ի միջոցով հնարավորություն է ստանում Թուրքիայի նախագահի պաշտոնը զբաղեցնել ցմահ (2033թ. նա կդառնա 79 տարեկան), ինչը լիովին համապատասխանում է նրա սուլթանական նկրտումներին: Արդյոք իրադարձությունները կզարգանա՞ն տվյալ սցենարով: Ֆորսմաժորների բացակայության դեպքում կարող ենք ասել՝ «այո՛»: Իսկ դա Էրդողանին հնարավորություն կտա իրագործել «Նոր Թուրքիայի» իր նախագիծը: Դեռևս 2014թ. հուլիսին Թուրքիայի նախագահի թեկնածու Էրդողանը հայտարարել էր, որ «Նոր Թուրքիան ճանապարհին է»՝ ընդգծելով, որ իրենց թիրախում 2023, 2053, 2071 թվականներն են (այս թվականների ընտրությանն անդրադարձել ենք մեր նախկին հոդվածներից մեկում[4]): Էրդողանը ձգտում է ձերբազատվել ԹՀ հիմնադիր Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքի «Հին Թուրքիայից» և այն փոխարինել իր «Նոր Թուրքիայով», պատմության մեջ թողնել ավելի խոր և ծանրակշիռ հետք, քան Մ.Ք. Աթաթուրքը: Մեր կարծիքով՝ Էրդողանը ձգտում է Մ.Ք. Աթաթուրքին հավասարվել և գերազանցել առնվազն 3 ոլորտում.

1) ԹՀ-ում Մ.Ք. Աթաթուրքը համարվում է «ազգային-ազատագրական պայքարի (քեմալական շարժման) հաղթող, որը մեկ դար առաջ երկիրը փրկել է օկուպացումից»: 2016թ. հուլիսի 15-16-ին Թուրքիայում տեղի ունեցավ ռազմական հեղաշրջման փորձ (ՌՀՓ), որը Էրդողանը որակեց «2-րդ ազգային-ազատագրական պայքար» և ինքնին դարձավ «2-րդ ազգային-ազատագրական պայքարի հաղթող»: Այդպիսով Էրդողանը (իր հաշվարկներով) կարող է մեկ հարթության վրա կանգնել արդեն «1-ին ազգային-ազատագրական պայքարի հաղթող» Աթաթուրքի հետ: Ի դեպ, Էրդողանը համարում է, որ ՌՀՓ տապալմամբ «երկիրը փրկել է օկուպացումից»: Օսմանյան կայսրության անկումից հետո քեմալական Թուրքիայում պետականորեն իշխում էր այն գաղափարը, որ երկիրը շրջապատված է թշնամիներով, որոնք փորձում են թուլացնել նրան կամ տարածքներ խլել նրանից: Վերջին շրջանում Էրդողանը փորձում է նույնը ներշնչել Թուրքիայի բնակիչներին, ՌՀՓ-ից հետո շարունակ իրավիճակը ներկայացնում է այնպես, թե «իրենք շրջապատված են ներքին ու արտաքին թշնամիներով և հարկադրված է մարտնչել մի քանի ճակատով» (քեմալական շարժումն էլ ունեցել է մի քանի ճակատ՝ արևելյան, արևմտյան, հարավային):

2) Մ.Ք. Աթաթուրքը 1923թ. հոկտեմբերի 29-ին հիմնադրել է ԹՀ-ը: Էրդողանն այս հարցում էլ ցանկանում է հնարավորինս հետ չմնալ նրանից և վերջերս շարունակ հայտարարում է «Նոր Թուրքիա» ստեղծելու անհրաժեշտության մասին, որի հռչակումը կարող է տեղի ունենալ 2023թ. առաջ՝

[4] *Հայկ Գաբրիելյան*, «Նոր Թուրքիա». պատմական ջրբաժաններ, «Նորավանք» ԳԿՀ, 10.11.2017:

ստվերելու համար Մ.Քեմալ Աթաթուրքի կողմից «Հին Թուրքիայի» հիմնադրման 100-ամյակը: Չենք բացառում, որ «Նոր Թուրքիայի» մեկնարկի մասին պաշտոնապես կհայտարարվի 2022թ.՝ հիջրայի 1400-ամյակին (622թ.): Այսինքն՝ 2023թ. կարող է դիմավորել ոչ թե Աթաթուրքի «Հին Թուրքիան», այլ Էրդողանի «Նոր Թուրքիան»: Հատկանշական է, որ դեռևս 1993թ. Էրդողանը դատապարտել էր քեմալիզմը՝ հայտարարելով, որ ԹՀ 70-ամյա պատմությունը (1923-1993թթ.) զուր տեղը վատնված ժամանակաշրջան է, որ ԹՀ-ը ոչնչի չի հասել այդ ընթացքում: Ընդ որում՝ 1993թ. Էրդողանն ընդամենը Ստամբուլի նահանգում *Refah* («Բարօրություն») կուսակցության ղեկավարն էր և կուսակցության Կենտրոնական վարչական կոմիտեի (*MKYK*) անդամ:

3) 1930-ականներին Աթաթուրքի զգալի ջանքերի շնորհիվ ԹՀ կազմում ընդգրկվեց Ալեքսանդրեթի սանջակը՝ վերածվելով Հաթայ նահանգի (մոտ 5500 կմ^2), որը Սիրիան ցայժմ համարում է իրենը: Թեև ԹՀ տարածքային աճը (29.06.1939) տեղի ունեցավ Աթաթուրքի մահվանից ամիսներ անց, սակայն թուրքական բանակը Հաթայ մտել էր Աթաթուրքի կառավարման ժամանակ: Նշենք, որ Էրդողանը 2016թ. աշնանից (երբ Սիրիայում մեկնարկել էր «Եփրատի վահան» ռազմական գործողությունը) շարունակ ահազանգում է 1923թ. Լոզանի համաձայնագրի «արդյունքների անարդարության» մասին՝ ընդգծելով, որ «օտար երկրներն օգտվել են Թուրքիայի թուլությունից և նրան պարտադրել են այդ համաձայնագիրը», որը Թուրքիայում ոմանք փորձում են ներկայացնել որպես «հաղթանակ»: Հայտնի է, որ Լոզանի համաձայնագիրը ֆիքսել է նաև Սիրիայի հետ Թուրքիայի սահմանը: Էրդողանը, թերևս, հաշվարկել է, որ եթե իրեն հաջողվի Թուրքիայի տարածքը մեծացնել Սիրիայի տարածքների հաշվին, ապա այս հարցում էլ կկարողանա Աթաթուրքի հետ կանգնել մեկ հարթության վրա: Դրա համար էլ թուրքական զորքը շարունակում է մնալ Սիրիայի տարածքում, ավելին՝ 2018թ. հոկտեմբերի սկզբին Էրդողանը հայտարարեց, որ թուրքական զորքը կհեռանա Սիրիայից այն բանից հետո, երբ այդ երկրում կանցկացվեն ընտրություններ և կվերացվի ահաբեկչական սպառնալիքը[5]: Սա նշանակում է, որ Էրդողանն անորոշ ժամկետով հետաձգում է թուրքական զորքերի դուրսբերումը Սիրիայից, քանի որ համասիրիական ընտրություններ ըստ ամենայնի չեն կարող անցկացվել մոտ ապագայում (Սիրիայի քրդերը վերահսկում են երկրի տարածքի մոտ 25%-ը): Այս ամենին զուգահեռ՝ Թուրքիայի կրթության նախարարությունն ու Կրոնական գործերի վարչությունը դպրոցներ ու մզկիթներ են կառուցում Սիրիայի այն շրջաններում, որոնցում առկա է թուրքական զորք, և համապատասխան աշխատանքներ իրակա-

[5] Erdoğan Türkiye'nin Suriye'den çekilme şartını açıkladı, DW, 04.10.2018.

նացնում տեղաբնակների շրջանում: Եվ վերջապես, Էրդողանը տվյալ շրջանները վերաբնակեցնում է ավելի վաղ Թուրքիայում ապաստանած (հավաքագրված, լոյալ տրամադրված) սիրիացի փախստականներով՝ այդ-պիսով փոխելով տարածաշրջանի ժողովրդագրական քարտեզը: Ելնելով դրանից՝ չպետք է բացառել, որ մի օր Էրդողանը կորոշի այդ նույն փախ-ստականների ձեռքերով այսպես կոչված հանրաքվե անցկացնել, որոնք էլ կողմ կքվեարկեն Սիրիայի կազմից անջատվելուն և Թուրքիային միանալուն (Թուրքիան կստանա բաղձալի 82-րդ նահանգը): Նկատենք նաև, որ 2014թ. ԹՀ նախագահի պաշտոնն ստանձնելուց հետո Էրդողանը Մուսթաֆա Քե-մալի մասին խոսելիս հաճախ է խուսափում «Աթաթուրք» բառը գործածելուց և ավելի շատ օգտագործում է «գազի» (հաղթող) բառը[6]: Օրինակ, 2015թ. նոյեմբերի 10-ին ելույթ ունենալով Աթաթուրքի մահվան 77-ամյակի կա-պակցությամբ՝ Էրդողանը չօգտագործեց «Աթաթուրք» բառը[7]: Ի դեպ, 2018թ. հունվարի վերջերին՝ Աֆրինում (Սիրիա) Թուրքիայի զինված ուժերի կողմից «Ձիթենու ճյուղ» ռազմական գործողությունը սկսելուց հետո, ԱԶԿ-ական պատգամավոր Մեթին Քյուլունքն առաջարկեց Էրդողանին շնորհել «գազի» կոչումը՝ ընդգծելով, որ «երկրի նախագահը առաջ է շարժվել մի շարք ճակատներում պատերազմելով»[8]:

Մեր կարծիքով՝ ներկայում վերոնշյալ եռաքայլ ճանապարհով է առաջ շարժվում Էրդողանը: Չենք բացառում, որ իր նեոօսմանյան նկրտումներով հայտնի Էրդողանը «Նոր Թուրքիայի» մայրաքաղաք կդարձնի Ստամբուլը (470 տարի՝ 1453-1923թթ., հանդիսացել է Օսմանյան կայսրության մայրաքա-ղաք) կամ էլ հատկապես Բուրսան (39 տարի՝ 1326-1365թթ. եղել է օսմանյան պետության մայրաքաղաք)՝ հրաժարվելով «Աթաթուրքի մայրաքաղաք» Ան-կարայից: Այսպիսով, Էրդողանի գերնպատակը Թուրքիայի պատմության մեջ շատ ավելի մեծ հետք թողնելն է, քան Մ.Ք. Աթաթուրքը: Ելնելով դրանից՝ Էրդողանը վարում է Աթաթուրքին (նաև նրա հիմնած ԺՀԿ կուսակցությունը) վարկաբեկելու քաղաքականություն: Ներկայացնենք մի շարք օրինակներ. 2011թ. նոյեմբերի 23–ին Էրդողանն ԱԶԿ ժողովում պետության անունից ներողություն խնդրեց 1930-ականների Դերսիմի (ներկայիս Թունջելի) սպանդի համար՝ այն որակելով որպես իրենց նորագույն պատմության ամենացավալի և աղետալի իրադարձություններից մեկը[9]: 2012թ. ապրիլի 3–ի ԱԶԿ ժողովի ժամանակ էլ Էրդողանը ԺՀԿ-ին մեղադրեց նացիստների հետ

[6] *Габриелян Айк*, «Ататюркский» разворот президента Турции Р.Т. Эрдогана, Институт Ближнего Востока, 16 ноября, 2017.
[7] Erdoğan'dan 'Atatürk'süz 10 Kasım mesajı, Cumhuriyet, 09.11.2015.
[8] Metin Külünk: Erdoğan'a 'Gazi' unvanı verilsin, Sözcü, 23.01.2018.
[9] Erdoğan Dersim için özür diledi, Milliyet, 23.11.2011.

համագործակցելու մեջ՝ իր կուսակիցներին ցույց տալով ԺՀԿ *Cumhuriyet* թերթի 1930–ական թթ. համարներից մեկը, որում նշված էր, որ Թուրքիայի տվյալ ժամանակվա ղեկավարությունը ողջունում է Հիտլերի և Մուսոլինիի իշխանության գալը[10]: Եվ վերջապես, արդեն նշվեց, որ Էրդողանը 1923թ. Լոզանի համաձայնագրի ստորագրումը որակել է որպես պարտություն[11]:

Սրան զուգահեռ՝ Էրդողանը վարում է Աթաթուրքին մոռացության մատնելու քաղաքականություն, որի դրսևորումներն ավելի ակնառու են դառնում: Օրինակ, ՌՀՓ-ից հետո թողարկված 1 լիրա արժեքով նոր մետաղադրամի վրա բացակայում է Աթաթուրքի պատկերը. նրան փոխարինել են ՌՀՓ նահատակները[12]: Կամ, ասենք, 2019թ. հոկտեմբերի 29-ին Ստամբուլում բացված նոր (երրորդ) և խոշորագույն օդանավակայանը հետագայում կարող է անվանակոչվել Էրդողանի անունով, մինչդեռ սրանից առաջ Ստամբուլի խոշորագույն օդանավակայանը կրում էր Աթաթուրքի անունը: Ուշագրավ է, որ Ստամբուլի երրորդ օդանավակայանը չի անվանվել ի պատիվ Աթաթուրքի և պարզապես ստացել է «Ստամբուլ» անունը («Լավ» կուսակցությունը 40 պատգամավորի ստորագրությամբ համապատասխան առաջարկով դիմել է խորհրդարանին[13]): Դա պատճառաբանվել է նրանով, որ Ստամբուլում արդեն գոյություն ունի Աթաթուրքի անվան օդանավակայան: Թուրքական իշխանությունները «մոռանում» են, որ երրորդ օդանավակայանի կառուցմամբ Աթաթուրքի անվան օդանավակայանը վերացվելու է, իսկ նրա տարածքը վերածվելու է Ազգային պարկի՝ դառնալով երրորդ խոշորագույն քաղաքային պարկն աշխարհում (11.700 հա[14]): Մինչդեռ Ստամբուլի նոր օդանավակայանը հետագայում սպասարկելու է տարեկան 200 մլն ուղևորի և դառնալու է աշխարհի խոշորագույն օդանավակայանը: Կարծում ենք, որ Էրդողանը նոր օդանավակայանի բացումն արեց ԹՀ հիմնադրման օրը, որպեսզի դրանով մեղմի քեմալականների խոր դժգոհությունը, որ այն չի անվանվել Աթաթուրքի անունով: Էրդողանն այդպիսով մեծ հարված հասցրեց Ստամբուլում Աթաթուրքի ժառանգությանը: Սրանից առաջ էլ Էրդողանն Աթաթուրքի ժառանգությանը նման հարված հասցրել էր Անկարայում՝ նախագահական նոր նստավայր «Աք սարայը» («Սպիտակ պալատ») կառուցել տալով Աթաթուրքի անտառային տնտեսության տարածքում[15]: Թուրք-իսլամական ճարտարապետական մոտիվներով կառուց-

[10] Erdoğan'dan CHP'ye Faşizm ve Nazi cevabı, Aktif Haber, 04.03.2012.
[11] Erdoğan: Sevr'i gösterip Lozan'a ikna ettiler, zafer bu mu?, Yeniçağ Gazetesi, 29.09.2016.
[12] Atatürksüz 1 TL'ler piyasada, Aydınlık, 10.12.2016.
[13] İYİ Parti'den yeni havalimanı hamlesi, Yeniçağ, 01.11.2018.
[14] Millet Bahçesi dünyanın en büyük 3'üncü şehir parkı olacak, Takvim, 25.05.2018.
[15] Atatürk Orman Çiftliği'nden Saray'a 8 dönüm daha verildi, Hürriyet, 09.04.2015.

ված և իր տարածքով Վաշինգտոնի «Սպիտակ տանը» 30 անգամ գերազանցող «Աք սարայը» ունի 1150 սենյակ, որով գերազանցում է օսմանյան ժամանակաշրջանի ամենահայտնի պալատները՝ Թոփքափը (380 սենյակ), Չըրաղան (310 սենյակ), Դոլմաբահչե (285 սենյակ) Յըլդրզ (60 սենյակ): Դա նույնպես վկայում է Էրդողանի սուլթանական նկրտումների մասին: Ի դեպ, վերջին շրջանում Էրդողանը կյանքի է կոչում մի շարք մեգանախագծեր (Ստամբուլի ջրանցք, «Մարմարա» երկաթուղային թունել, «Եվրասիա» ավտոմոբիլային թունել), որոնք հանդիսացել են օսմանյան սուլթանների (Սուլեյման 1-ին, Աբդուլմեջիդ, Աբդուլ Համիդ 2-րդ) երազանքը: Դրանով Էրդողանը ձգտում է պատմության մեջ մտնել ոչ միայն Մ.Ք. Աթաթուրքին գերազանցած, այլև օսմանյան սուլթանների երազանքներն ի կատար ածած առաջնորդ՝ այդ համատեքստում ի ցույց դնելով սեփական առավելությունը նաև օսմանյան սուլթանների նկատմամբ:

Նշենք, որ Էրդողանը սուլթանական, նեոօսմանական նկրտումներից բացի, ակնհայտ (պան)իսլամիստ է, ինչի մասին վկայում է ոչ միայն վերջին տարիների Թուրքիայի իսլամականացումը (մզկիթների մասշտաբային կառուցում, կրոնական դասընթացների ավելացում, հիջաբով կանանց թվաքանակի մեծացում, պետական հիմնարկներ հիջաբի ներթափանցում, Կրոնական գործերի վարչության բյուջեի ընդլայնում, հայտնի պանիսլամիստ Աբդուլ Համիդ 2-րդի մեծարում և այլն), այլև այն, որ դեռևս 1999թ. նա ստիպված էր 4 ամիս անցկացնել բանտում՝ իսլամական բնույթի քառատող արտասանելու համար («Մինարեները մեր սվիններն են, գմբեթները՝ մեր սաղավարտները, մզկիթները մեր զորանոցներն են, իսկ հավատացյալները՝ մեր զինվորները»): Էրդողանն իրեն երևակայում է որպես խալիֆ և դրա համար էլ դարձել է համայն աշխարհում մուսուլմանների իրավունքների ինքնահռչակ պաշտպան (Էրդողանը շարունակ քննադատում է մի շարք երկրների (ԱՄՆ, ՌԴ, Իսրայել, Գերմանիա, Ֆրանսիա, Չինաստան և այլն), ուր նրա կարծիքով ոտնահարվում են մուսուլմանների իրավունքները): Ուշագրավ է, որ ՍԲՀ-ի հենց հաջորդ օրն Էրդողանն այցելեց օսմանյան սուլթան Սելիմ 1-ին Ահեղի (1512-1520թթ.) գերեզման[16], որը Եգիպտոսը գրավելուց հետո դարձել էր օսմանյան առաջին խալիֆ (2016թ. նրա պատվին անվանակոչվեց Ստամբուլում Բոսֆորի նեղուցի վրա կառուցված 3-րդ կամուրջը): Ստացվում է, որ Էրդողանն իրեն երևակայում է և՛ որպես սուլթան, և՛ որպես խալիֆ, մինչդեռ թե՛ սուլթանությունը, թե՛ խալիֆայությունը 1920-ականներին վերացվել են Աթաթուրքի ջանքերով:

[16] Erdoğan, Yavuz Sultan Selim Türbesi'nde, Hürriyet, 17.04.2017.

Այսպիսով, 2018թ. Թուրքիան դարձավ կառավարման նախագահական համակարգով (մեկ մարդու ռեժիմով) երկիր, Էրդողանը՝ սուպերնախագահ, նախագահական աննախադեպ լայն լիազորություններով (վերջին շրջանում շատերն են սկսել «Թուրքիա» բառի փոխարեն օգտագործել «Էրդողան» բառը, ինչն աննկատ չի մնացել նաև թուրք հետազոտողների կողմից[17]): Սրանով սկսվում է Էրդողանի նոր հաղթարշավը Թուրքիայի ներսում: Հազիվ թե առաջիկայում հնարավոր կլինի ընտրական պայքարի շնորհիվ կասեցնել այդ հաղթարշավը, և Էրդողանը Թուրքիայի նախագահի պաշտոնը կզբաղեցնի թերևս ցմահ (ինչպես սուլթան): Էրդողանի այդ հաղթարշավը հետագայում կարող է կասեցնել հենց միայն ինքը՝ Էրդողանը, իր պոռթկուն ու անհեռատես քայլերով, որոնցից երկուսը հարկ ենք համարում հիշատակել: Առաջինը գրանցվեց 2015թ. նոյեմբերին, երբ թուրքական կողմը կործանեց ՌԴ զինված ուժերին պատկանող SU-24M ռմբակոծիչը, որին հաջորդեցին Թուրքիայի հանդեպ ՌԴ պատժամիջոցները և որոնցից Թուրքիայում տուժեցին հարյուր հազարավոր կամ միլիոնավոր անձինք: Երկրորդ դեպքն էլ գրանցվեց դրանից մեկ տարի անց՝ 2016թ. նոյեմբերին, երբ Թուրքիայում կալանավորեցին ամերիկացի հոգևորական Էնդրյու Բրանսոնին՝ հուսալով, որ ԱՄՆ-ը կհամաձայնի նրան փոխանակել Ֆեթհուլա Գյուլենի հետ, որը վերջին տարիներին վերածվել է Էրդողանի թիվ մեկ ներքին թշնամու: Սակայն հոգևորականների փոխանակման գործարքի փոխարեն Թուրքիան (Էրդողան) ստացավ ամերիկյան պատժամիջոցներ, լիրայի արժեզրկում, ապրանքների գնաճ, որից տուժեցին միլիոնավոր անձինք: Այս օրինակները վկայում են, որ հետագայում Էրդողանի «քաղաքական առողջությանը» կարող է վնասել հենց ինքը՝ Էրդողանը, որը փորձում է հավասարը հավասարի պես խոսել այնպիսի երկրների հետ, ինչպիսիք են ԱՄՆ-ը կամ ՌԴ-ն: Երկրի ներսում էլ Էրդողանը պետք է որոշակի զգուշավորություն ցուցաբերի Աթաթուրքին (թեկուզ անուղղակի) վարկաբեկելու և մոռացության մատնելու իր քաղաքականությունում, ինչը նույնպես մի օր կարող է հանգեցնել հանրային պոռթկման:

Ակնկալում ենք, որ «սուպերնախագահ» Էրդողանը կվարի է՛լ ավելի խիստ ներքին քաղաքականություն, ավելի մեծ ճնշման տակ կպահի ընդդիմադիր զանգվածներին: Ինչո՞վ կարող է ավարտվել այս ամենը: Մ.Ք. Աթաթուրքին, ինչպես նաև օսմանյան սուլթաններին գերազանցելու հովերով տարված Էրդողանի (Թուրքիայի) հիմնական խնդիրը կա և լինելու է այն, որ նա չունի համարժեք քաղաքական հետնորդ, և քաղաքական ասպարեզից

[17] Hakan Aksay, Ermenistan izlenimleri: Ağrı Dağı kimin? Ya Sarı Gelin?, T24, 28.05.2017.

Էրդողանի հեռանալուց (մահվանից) հետո առաջանալու է լուրջ վակուում, որը չի կարողանալու լցնել անգամ նրա փեսա, Թուրքիայի ֆինանսների նախարար Բերաթ Ալբայրաքը, եթե անգամ նախագահի պաշտոնում փոխարինի Էրդողանին: Ալբայրաքը չունի Էրդողանի խարիզման, նման մասշտաբի հարգանք երկրի ներսում, նման կենսագրություն և այլն: Եվ ահա այդպիսի պայմաններում ԱԶԿ-ն կարող է արագորեն և զգալիորեն զիջել իր դիրքերը Թուրքիայի քաղաքական ասպարեզում և անգամ արգելվել դատարանի որոշմամբ: Էրդողանի («երկաթե ձեռքի») հեռանալուց հետո Թուրքիայում կարող են բացվել միանգամից մի քանի զսպանակներ (քաղաքական ուժեր), ինչը կարող է հանգեցնել թե՛ քաղաքացիական պատերազմի, թե՛ Թուրքիայի տարածքային մասնատմանը (կտրուկ կակտիվանան Թուրքիայի քրդերը):

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐ

Սամվել Մանուկյան *

Խնդիրը

Լենինը, Ստալինը, Չերչիլը, Ռուզվելտը, Հիտլերը, Դը Գոլը, Մաո Ցզե Դունը, Կաստրոն XX դարի ամենահռչակավոր առաջնորդներն ու պետական գործիչներն էին: Ներկայում նրանց անուններն ու կերպարները խորհրդանշական նշանակություն են ստացել՝ արտահայտելով նրանց գաղափարները, ժամանակաշրջանն ու գործունեության ոճը: Այդ կերպարներից ոչ մեկը միանշանակ չէ՝ նրանց գնահատում են համաշխարհային չարագործից մինչև մարդկության պայծառ ապագան կերտող: Երբեմն այդ իրարամերժ կարծիքները համատեղվում են:

Այդ պատճառով բազմաթիվ սոցիոլոգիական հետազոտություններում պարբերաբար գնահատվում է, թե որքանով են մարդիկ հիշում այդ անձանց, որքանով են ընդունելի այդ կերպարները և նրանց հետ շաղկապված գաղափարախոսությունները: Յուրաքանչյուր կերպար, որպես կանոն, փորձարկվում է նրա հետ ծագումնաբանորեն կապված հասարակություններում, չնայած նրանցից մի քանիսն ունեն գլոբալ տարածվածություն և ունիվերսալ ազդեցություն: Հետխորհրդային տարածքում պարբերաբար փորձարկվում են հասարակության դիրքորոշումները Լենինի և Ստալինի կերպարների նկատմամբ:

Հոդվածում ներկայացված են դիրքորոշումները Իոսիֆ Ստալինի նկատմամբ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի հասարակություններում: Արդյունքները ստացվել են Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնների «Կովկասյան բարոմետր 2012» հետազոտության տվյալների շտեմարանի վերլուծությամբ[1]:

---

* «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի փորձագետ, սոց.գ.թ.:

[1] Շտեմարանը՝ http://www.crrc.am/caucasusbarometer/documentation?lang=en

Արդյունքներ

Հիշողությունը. Հարավային Կովկասի երկրներում Ստալինին ճանաչողների քանակը տարբերվում է: Այն շատ բարձր է Վրաստանում (18-ից բարձր տարիքի բնակչության 94.6%-ը) և Հայաստանում (91.6%), սակայն Ադրբեջանում այդ անձանց քանակը նշանակալիորեն ավելի փոքր է (78.4%), այլ կերպ՝ Ադրբեջանի համարյա յուրաքանչյուր չորրորդ չափահաս բնակիչը չգիտի, թե ով է Ստալինը (Գծապատկեր 1):

Գծապատկեր 1



Տարիքային խմբերում Ստալինին ճանաչողների թվաքանակի դիտարկումը թույլ է տալիս պատկերացում կազմել ոչ միայն Ստալինի, այլև ընդհանուր առմամբ 20-րդ դարի մասին հիշողության պահպանման մասին Հարավային Կովկասի երկրներում:

Վրաստանում և Հայաստանում Ստալինին ճանաչողների թվաքանակի փոփոխությունն ամենաբարձր տարիքային խմբից՝ 60 և ավելի տարեկան, մինչև 30-44 տարեկանների տարիքային խումբը մոտավորապես նույնն է. այն նվազել է համապատասխանաբար 4 և 6 տոկոսով: Սակայն Հայաստանում ավելի երիտասարդ՝ 25-29 տարիքային խմբում ցուցանիշը մեծ անկում է ունեցել՝ 13%, իսկ Վրաստանում՝ միայն 6%: Սակայն ամենաերիտասարդ խմբում՝ 18-24 տարեկան, Ստալինին ճանաչողների թվաքանակը և՛ Հայաստանում, և՛ հատկապես Վրաստանում աճել է: Այսինքն՝ հիմքեր կան ենթադրելու, որ այդ **հասարակություններում, մասնավորապես նաև տեղեկատվա-**

կան դաշտերում, առկա են այնպիսի գործոններ, որոնք նպաստում են երիտասարդության շրջանում Ստալինի ճանաչելիության աճին:

Ադրբեջանում այլ պատկեր է. այստեղ՝ սկսած 45-59 տարեկանների խմբից, Ստալինին ճանաչողների քանակն անշեղորեն և արագ նվազում է և 18-24 տարեկանների խմբում կազմում է 52.5%, այլ կերպ՝ **Ադրբեջանում յուրաքանչյուր երկրորդ 18-24 տարեկան երիտասարդը չի ճանաչում Ստալինին:** Այսինքն՝ Ադրբեջանում կան լուրջ խնդիրներ՝ կապված երիտասարդության շրջանում պատմական հիշողության պահպանման հետ:

Ստալինի նկատմամբ դիրքորոշումների բնույթը. Հարավային Կովկասի երկրներում բավական ստվար խմբեր են կազմում Ստալինի նկատմամբ անտարբեր անձինք: Այդ խումբն ամենամեծն է Հայաստանում՝ 25%, իսկ Վրաստանում և Ադրբեջանում՝ 15-ական տոկոս:

Ուշագրավ է, որ Վրաստանում Ստալինին **դրական** ընկալողների քանակը շատ մեծ է՝ 45%, որը երկու և կես անգամ գերազանցում է **բացասական** ընկալողներին (20%): Իսկ Հայաստանում և Ադրբեջանում Ստալինին դրական ընկալողների քանակն (համապատասխանաբար 26% և 21%) ավելի փոքր է բացասական ընկալողների քանակից (35%, 33%): Այնուամենայնիվ, այս երկրներում Ստալինի նկատմամբ բացասական դիրքորոշումների գերազանցումը դրական դիրքորոշումներին չի կարելի համարել «ճնշող»:

Գծապատկեր 2



Նշենք, որ Ստալինի նկատմամբ դրական վերաբերմունքը ներկայացնում է նախ և առաջ՝ հարգանք, իսկ հետո՝ համակրանք: Կան նաև անձինք, որոնք հիանում են Ստալինով (Վրաստանում և Հայաստանում՝ մոտ 3-ական տոկոս): Բացասական վերաբերմունքի հիմնական բովանդակությունն է՝ Հայաստանում՝ հակակրանքն ու ատելությունը, իսկ Ադրբեջանում՝ նախ՝ ատելությունը, հետո՝ հակակրանքը: Բոլոր երկրներում հարցվածների 7-10%-ի շրջանում Ստալինն առաջացնում է վախի զգացողություն:

Ստալինի գործունեության գնահատականները. Հետազոտությամբ ուսումնասիրվել է, թե ինչպես են գնահատում հարավկովկասյան հանրապետությունների հասարակությունները Ստալինի գործուեության հիմնական արդյունքները, և արդյո՞ք այդ հասարակությունում առկա է ստալինյան տիպի իշխանության պահանջարկ: Ստալինին ճանաչողներին հարց է տրվել, թե արդյոք նրանք համաձայն են Ստալինի վերաբերյալ հետևյալ դրույթներին.

- «Ստալինը իմաստուն առաջնորդ էր, որի օրոք Խորհրդային Միությունը հզորացել և բարգավաճել է»:
- «Չնայած Ստալինի բոլոր սխալներին՝ ամենակարևորն այն է, որ Խորհրդային Միությունը հաղթեց Հայրենական մեծ պատերազմում»:
- «Ստալինը դաժան և անմարդկային բռնակալ էր, որը պատասխանատու է միլիոնավոր անմեղ մարդկանց մահվան համար»:
- «Մեր ժողովուրդը միշտ էլ Ստալինի նման առաջնորդի կարիք ունի, ով կգա և կարգ ու կանոն կհաստատի»:

Ստացված արդյունքները ներկայացված են Գծապատկեր 3-ում:

Տվյալները ցույց են տալիս, որ բոլոր երեք հասարակություններում մարդկանց քանակը, որոնք համաձայն են, որ «Ստալինի օրոք երկիրը հզորացել է և բարգավաճել» և որ «Հայրենական մեծ պատերազմում նրա առաջնորդությամբ ԽՍՀՄ հաղթանակն ամենակարևոր նվաճումն է», գերազանցում է այդ դրույթներին անհամաձայն անձանց քանակը: Ընդ որում՝ այդ գերազանցումն առավել ակնհայտ է Վրաստանում, որտեղ առաջին դրույթի դեպքում «համաձայն» շերտի ծավալը 4.6 անգամ գերազանցում է «անհամաձայն» շերտը (համապատասխանաբար՝ 65% և 14%), իսկ երկրորդ դրույթի դեպքում՝ գերազանցումը 8-ապատիկ է (72% և 9%):

Հայաստանում նույնպես այդ հարաբերակցությունները բավական մեծ են: Այստեղ առաջին դրույթին համաձայն շերտի ծավալը 1.7 անգամ է գերազանցում անհամաձայն շերտի ծավալը (51% և 30%), իսկ երկրորդ դրույթի դեպքում՝ 3.5 անգամ (63% և 18%): Ադրբեջանում առաջին դրույթին համաձայն շերտը կազմում է 34%, իսկ անհամաձայն շերտինը՝ 28%: Իսկ երկրորդ դրույթին համաձայն շերտի ծավալը գերազանցում է անհամաձայն շերտը 4.7 անգամ (56% և 12%):

Չնայած բոլոր երեք հանրապետությունների հասարակություններում գնահատում են Ստալինի վաստակը ԽՍՀՄ բարգավաճման և Հայրենական մեծ պատերազմում հաղթանակի հարցերում, այնուամենայնիվ, այդ հասարակություններում մեծամասնությունը միաժամանակ համաձայն է, որ

Ստալինը «դաժան բռնակալ էր, որը պատասխանատու է միլիոնավոր անմեղ մարդկանց մահվան համար»: Վրաստանում այս դրույթին համաձայն շերտի ծավալը գերազանցում է անհամաձայն շերտը 2.3 անգամ (51% և 22%), Հայաստանում՝ 4 անգամ (64% և 16%), իսկ Ադրբեջանում՝ 5.3 անգամ (53% և 10%): Ընդ որում՝ այն անձանց բացարձակ գերակշիռ մասը, ովքեր համաձայն չէին Ստալինի բռնակալության վերաբերյալ դրույթին, համաձայնել են այն դրույթին, որ «Այդ հալածանքները քաղաքականապես անհրաժեշտ էին և արդարացված՝ հաշվի առնելով պատմական հանգամանքները»:

Գծապատկեր 3



Ավտորիտար առաջնորդի պահանջարկը. Ստալինի վերաբերյալ նշված դրական և բացասական դրույթների հանրագումարի արդյունքում հարավկովկասյան հանրապետությունների հասարակություններում այն շերտի ծավալը, որը համաձայն է, որ «Մեր ժողովուրդը **միշտ էլ** Ստալինի նման առաջնորդի կարիք ունի, որը կգա և կարգուկանոն կհաստատի», նշանակալիորեն զիջում է այդ դրույթին անհամաձայն շերտերի ծավալներին:

Այնուամենայնիվ, Հայաստանում և Վրաստանում **ստալինյան կարգուկանոնի կողմնակիցները նշանակալի ծավալ են կազմում**: Ընդ որում՝ այդ շերտի ծավալն ամենամեծն էր Հայաստանում՝ 35% (համաձայն չէր 46%-ը)[2], Վրաստանում՝ 25%-ը (համաձայն չէր 46%-ը), իսկ Ադրբեջանում այն կազմել է 15% (համաձայն չէր 49%-ը):

Եզրակացություններ

Հայաստանում և Վրաստանում հիշողությունը Ստալինի մասին պահպանվել է: Չնայած այն որոշ չափով խարխլված է երիտասարդական խմբերում, սակայն հիմքեր կան ենթադրելու, որ այդ հիշողությունն ունի վերականգնվելու միտում: Ադրբեջանում Ստալինի մասին հիշողությունն արագորեն անհետանում է՝ 18-24 տարեկան երկու երիտասարդից միայն մեկն է ճանաչում Ստալինին:

Վրաստանում Ստալինի նկատմամբ դրական վերաբերմունքը կրկնակի գերազանցում է բացասական վերաբերմունքը, իսկ Հայաստանում և Ադրբեջանում դրական վերաբերմունքը որոշ չափով ավելի ցածր է, քան բացասականը: Դրական վերաբերմունքում գերակշռում է հարգանքը:

Հարավային Կովկասի երկրների հասարակություններում **ընդհանուր առմամբ ադեկվատ են ընկալում Ստալինի գործունեությունը**՝ հիշում են և գնահատում նրա դերը ԽՍՀՄ զարգացման և բարգավաճման, ինչպես նաև Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի հարցում: Սակայն, միաժամանակ, հիշում են ստալինյան բռնադատումները և դատապարտում դրանք:

Մյուս կողմից՝ հարավկովկասյան հանրապետություններում առկա է **ավտորիտար կառավարման մեծ պահանջարկ**, հասարակության նշանակալի հատվածները՝ Հայաստանում մեկ երրորդը, իսկ Վրաստանում՝ մեկ քառորդը, համարում են, որ իրենց երկրներում Ստալինի նման առաջնորդի կարիք կա:

Այս իրավիճակը պայմանավորված է ազատական տնտեսական հարաբերությունների համատեքստում հասարակությունների խիստ տնտեսական բևեռացվածությամբ, աղքատության նշանակալի մակարդակով և վերնախավերի օրենքից վեր կարգավիճակով:

[2] Հիշենք, որ հետազոտության դաշտային փուլն իրականացվել է 2012թ.:

ՔԱՂԱՔԱՑԻ-ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՆՑԵՊՏԸ ԻՍՐԱՅԵԼՈՒՄ. ՈՐՈՇ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Կարեն Վերանյան[*]

Հրեության գոյատևման և ազգային պետության հաստատման պայքարի արդյունքում առաջացավ հրեության «քաղաքացի-զինվորական», «անհատ-զինվորական» հայեցակարգը, ըստ որի՝ յուրաքանչյուր հրեա իր մասնակցությունը պետք է ունենա հրեական համայնքների և պետության անվտանգության ապահովման գործին:

«Քաղաքացի-զինվորական» գաղափարը տարածվում է Իսրայել պետության հրեաների վրա, սակայն «անհատ-զինվորական» հայեցակարգային մոդելը, որը հիմնված է հրեության հավատքի և գաղափարախոսության վրա, բովանդակային-իմաստային առումով անհամեմատ ավելի ընդգրկուն է: Այն, բացի երկրի հրեա բնակչությունից, ներառում է նաև աշխարհասփյուռ հրեությունը՝ անկախ նրանից, թե վերջինիս ներկայացուցիչներն ինչ քաղաքացիություն ունեն:

Իսրայելի պաշտպանության բանակի (ԻՊԲ) ստեղծմամբ «անհատ-զինվորական» հայեցակարգը դարձավ երկրի զինված ուժերի կազմավորման և կայացման գործընթացի և առհասարակ՝ հասարակություն-զինված ուժեր փոխգործակցության հիմքն ու հենարանը: Այդ հայեցակարգի գաղափարական էությունն այն է, որ համայն հրեության յուրաքանչյուր անհատ միաժամանակ նաև զինվորական է՝ պատրաստ պաշտպանելու Իսրայել պետության անվտանգությունն ու ազատությունը:

«Անհատ-զինվորական» մոդելը նաև զգալի ազդեցություն ունեցավ երկրի զինվորականություն-հասարակություն հարաբերությունների կանոնակարգման վրա, որը նախատեսում էր զինված ուժերի զարգացման գործում հասարակության ինտեգրման, մասնակցության մեխանիզմների ներդրում: Այդ թվում՝ ԻՊԲ-ի նկատմամբ հասարակական վերահսկողության սահմանման գործիքակազմի կիրառություն, որի արդյունավետությունը պայմանավորված է բանակաշինության հարցում հասարակության ընդհանուր համա-

[*] «Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի ղեկավար:

ձայնության կազմակերպման գործընթացով: Այսինքն՝ թե որքանով են հասարակության տարբեր կառույցներն ու անհատ քաղաքացիները կարողանում համընդհանուր փոխհամաձայնեցված մոտեցումներ կիրառել երկրի պաշտպանական անվտանգության ապահովման, ներառյալ՝ բանակաշինության զարգացման, երկրի պաշտպանական համակարգի կառավարման հարցերի վերաբերյալ:

«Անհատ-զինվորական» մոդելը ենթադրում է նաև հետևյալ հիմնական գործառույթները.

- ձևավորել զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական հսկողության ինստիտուտ, ինչն իր հերթին առանցքային նշանակություն ունի զինված ուժերի մարտունակության բարձրացման համար,
- կազմակերպել հասարակությունում զինված ուժերի ինտեգրման գործընթացը, մշակել հասարակություն-զինված ուժեր բաց և ազատ համագործակցության արդյունավետ մեխանիզմներ: Ընդ որում, Իսրայելի և համասփյուռ հրեության համար բանակն առհասարակ համարվում է հայրենի երկրի նաև կարևոր սոցիալական ինստիտուտներից մեկը,
- յուրաքանչյուր հրեա՝ հայրենաբնակ կամ ոչ, անկախ այն բանից՝ ծառայել է ԻՊԲ-ում, թե ոչ, անկախ սեռից, տարիքից և քաղաքացիությունից, պետք է իր մասնակցությունն ունենա զինված ուժերի մարտունակության բարձրացման, պաշտպանական համակարգի գործունեության կատարելագործման և հայրենիքի պաշտպանության գործին: Հրեության համար սա գործընթաց է, որով ազգը դառնում է բանակ,
- «անհատ-զինվորական» մոդելը, լայն հնարավորություններ ստեղծելով զինված ուժերի զարգացման գործում հասարակության անմիջական ներգրավվածության համար, միաժամանակ ձևավորում է հասարակություն-զինված ուժերի միջև կոնսենսուս, որի հիման վրա արդյունավետ պայքար է տարվում զինված ուժերում առկա արատավոր երևույթների դեմ:

Իսրայելում ընդունված է ասել՝ «Իսրայելի պաշտպանության բանակը համայն հրեա ժողովուրդն է», և որ «Իսրայել պետության յուրաքանչյուր քաղաքացի տարվա մեջ 11 ամիս արձակուրդում գտնվող զինվորական է»: Հրեության, երկրի իշխանության և հատկապես ԻՊԲ ու նաև հոգևորականության խորին համոզմամբ (ինչպես նաև տարբեր միջազգային ռազմական փորձագիտական գնահատականներով)՝ Իսրայելի պաշտպանության բանակն աշխարհի ամենամարտունակ զինված ուժերից մեկն է: Վարկանիշ,

որը ձեռք է բերվել զինվորականության հենց հոգևոր-բարոյական արժեքների պահպանման, զարգացման և լայն կիրառման արդյունքում: Վերոնշյալ առումով և հատկապես հրեության հոգեմտավոր ու գաղափարական համընդհանուր ընկալմամբ, դասալքությունը, ԻՊԲ-ում զինծառայությունից խուսափելը համարվում են թե՛ մեղք, թե՛ հանցագործություն:

Քաղաքական ոլորտ

Իսրայելի պետական ապարատի ղեկավարներից շատերը եղել են Իսրայելի պաշտպանության բանակի բարձրաստիճան հրամանատարներ: Պաշտպանական համակարգի ներկայացուցիչների կողմից երկրի բարձր քաղաքական պաշտոնների ստանձնման իրողությունն առաջին հայացքից ենթադրում է, որ երկիրը կարող է գնալ ռազմականացման ճանապարհով, սակայն Իսրայելի դեպքում զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական հսկողության և զինված ուժերի զարգացման գործում հասարակության ներգրավվածության հարցերը կանոնակարգված են և գործում են բավական արդյունավետ: Քանի որ երկիրը զարգանում է մշտական պատերազմի սպառնալիքների ներքո, ուստի բարձրաստիճան զինվորականների ներկայացվածությունը երկրի քաղաքական վերնախավում դրական ազդեցություն է ունենում Իսրայելի պաշտպանական-անվտանգային հարցերում քաղաքական որոշումների կայացման գործընթացի վրա:

Որպես կանոն, երկրի քաղաքական վերնախավի բարձրաստիճան պաշտոնյաներից շատերն իրենց զինվորական ուղին անցել են, մասնավորապես, ԻՊԲ այսպես կոչված էլիտար (հատուկ նշանակության, մարտական) զորամասերում (Իսրայելում «էլիտար ստորաբաժանումներ» ասելով նկատի են առնվում այն զորատեսակները, որոնք իրականացնում են արտակարգ կարևորության և բարձր պատասխանատվություն պահանջող մարտական գործողություններ և խնդիրներ. էլիտար զորքեր են համարվում նաև Իսրայելի ռազմաօդային ուժերը): Էլիտար զորամասերում զինծառայությունը Իսրայելում և առհասարակ հրեության շրջանում ընկալվում է որպես հայրենիքի և համայն հրեության նկատմամբ իր հայրենասիրությունն ու նվիրվածությունն արտահայտելու յուրաքանչյուր հրեայի հնարավորություն՝ անհրաժեշտության դեպքում անգամ սեփական կյանքը զոհաբերելու պատրաստակամությամբ: Իսրայելական բանակի էլիտար զորամասերում առանձնանում է 1957թ. ստեղծված և ԻՊԲ Գլխավոր շտաբի հետախուզության վարչության ենթակայության տակ գործող «Սայերեթ Մատքալ» հատուկ նշանակության զորամասը, որը կարող է մարտական խնդիրներ կատարել նաև Իսրայելի

սահմաններից դուրս: Այս զորամասում ծառայածներից շատերը հետագայում դարձել են բարձրաստիճան պաշտոնյաներ, քաղաքական-ռազմական գործիչներ: Նրանց մեջ մեծ է նաև հայրենադարձ հրեաների և կանանց թիվը: Զորամասի նշանավոր հրամանատարներից է եղել փոխգնդապետ Յոնաթան Նեթանյահուն՝ Իսրայելի գործող վարչապետ Բենիամին Նեթանյահուի ավագ եղբայրը, որը զոհվել է 1976թ. իր անմիջական հրամանատարության ներքո երկրից դուրս իրականացվող՝ պատանդների ազատ արձակման մի գործողության ընթացքում: Այլ նշանավոր հրամանատարներից են Իսրայելի նախկին վարչապետ Էհուդ Բարաքը (1999-2001թթ.), «ՑԱՀԱԼ»-ի (Իսրայելի զինված ուժերը միջազգայնորեն հայտնի է նաև «ՑԱՀԱԼ» անվանումով, որը եբրայերենից թարգմանաբար նշանակում է Իսրայելի պաշտպանության բանակ) Գլխավոր շտաբի պետ Մոշե Յաալոնը (2002-2005թթ.) և այլք: Ընդհանրապես, Իսրայելի զինված ուժերում և հատկապես նրա էլիտար զորամասերում զինծառայությունը կարևոր ոստնակ է երկրի քաղաքական-իշխանական վերնախավում ներկայացված լինելու համար: Ուստի, Իսրայել պետության բարձրաստիճան պաշտոնյաներից շատերը, լինելով ԻՊԲ գեներալներ և նախկին բարձրաստիճան սպաներ, նաև այդ շահագրգռությամբ են ձգտում, որպեսզի իրենց զավակները շարունակեն ընտանեկան-սպայական ավանդույթները՝ որպես երկրի իշխանությունում բարձրաստիճան դիրքերի հասնելու կարևոր երաշխիքներից մեկը: Այդուհանդերձ, հատկանշանական է, որ Իսրայելում չկան, այսպես կոչված, «սպայական դինաստիաներ». ԻՊԲ բարձրաստիճան սպա դառնալու հավասար հնարավորություններ ունեն ինչպես գեներալների, այնպես էլ երկրի շարքային քաղաքացիների զավակները: Սակայն ԻՊԲ-ում գործում է զինված ուժերի մարտական հատուկ կամ էլիտար կոչվող զորամասերում զինծառայությունը սերնդեսերունդ փոխանցելու սպայական ավանդույթը: Օրինակները քիչ չեն. զինվորական պարտքը կատարելիս տարբեր տարիներին զոհվել են ԻՊԲ Գլխավոր շտաբի պետ, գեներալ Ռաֆայել Էյթանի որդին՝ Յորամ Էյթանը (զինվորական կոչումը՝ մայոր), ԻՊԲ Ռազմաօդային ուժերի գլխավոր հրամանատար, գեներալ Դավիթ Իվրիի որդին՝ Գիլ Իվրին (կապիտան), Իսրայելի նախկին վարչապետ Մենահեմ Բեգինի թոռը՝ Յոնաթան Բեգինը (կապիտան) և այլք:

Կրթական ոլորտ

ԻՊԲ-ն նաև յուրօրինակ կրթօջախ է և երկրի կրթության ու դաստիարակության զարգացման առաջատար հաստատություններից մեկը: ԻՊԲ-ն զինվորների համար արդյունավետ ոստնակ է մասնագիտացման և ընդհանուր

կրթության բարձրացման համար: Իսրայելում գիտակրթական ընդհանուր բարձր մակարդակի առկայությունը հնարավորություն է տալիս երիտասարդությանը՝ մասնագիտական հմտություններն ու գիտելիքներն առավելագույնս ներդնել զինված ուժերի զարգացման գործում և զինծառայության ընթացքում ապահովել հնարավորինս բարձր կրթական-մասնագիտական արդյունավետություն, ինչպես նաև զինծառայության ընթացքում ձեռք բերված մասնագիտական փորձը հետադարձ մեխանիզմով կիրառել հասարակությունում:

- Փորձը ցույց է տալիս, որ ԻՊԲ-ում շարային դասաժամերի փոխարինումը կրթական-գիտական ծրագրերով նպաստում է զինվորների առօրյայում ուսումնական բաղադրիչի հագեցածությանը, ինչն իր հերթին դրականորեն է անդրադառնում թիմային աշխատանքի վրա: Շարային ժամերի աստիճանական սահմանափակումը և դրանց փոխարինումը կրթական-մտավոր դասընթացներով միաժամանակ կարևոր նշանակություն են ունեցել զինծառայողների նեղ զինվորական մասնագիտացման խորացման հարցերի տեսանկյունից: Նույն Իսրայելի կամ Շվեյցարիայի բանակում շարային ծրագիրը մեծ չափով հանված է՝ համարվելով զինծառայության կազմակերպման ո՛չ արդյունավետ մեթոդ և ժամանակի անիմաստ կորուստ: ԻՊԲ-ում հաճախ ընդունված է մեջբերել այն կարգախոսը, թե՝ «ԻՊԲ-ն պատերազմի՛ համար նախատեսված բանակ է, այլ ո՛չ թե զորահանդեսների»:
- Պետք է նկատել, որ ԻՊԲ-ն օգտագործում է զինակոչիկի մասնագիտական հմտությունները, սակայն առաջնահերթություն է տալիս զինված ուժերի հատուկ մասնագիտական ուղղություններին ու այդ պահանջների բավարարմանը:
- Էլիտար (հատուկ նշանակության, մարտական) զորամասեր են ուղարկվում հիմնականում այն զինակոչիկները, որոնք նման զորամասում ծառայելու կամավոր ցանկություն են հայտնել: Էլիտար զորամասերում նորակոչիկների ընտրության գործընթացը մեկնարկում է նրանց դպրոցական հասակում, երբեմն՝ զորակոչային ժամկետից 2-3 տարի առաջ: ԻՊԲ հատուկ նշանակության զորքերում զինծառայության անցնելու համար անհրաժեշտ է հանձնել քննություն, որը հայտնի է «Գիբուշ» անվանումով: Մեկ թափուր տեղի համար ներկայացվում են ընդհուպ մինչև մի քանի հարյուր թեկնածություններ: Այս զորամասերում զինծառայություն անցնելու համար պահանջվում է հանձնել ֆիզիկական պատրաստվածության և հատուկ հոգեչափական թեստեր:

- Եթե ԻՊԲ-ն նպատակահարմար է համարում զինակոչիկի ստացած քաղաքացիական մասնագիտությունը շարունակել զինծառայության ընթացքում, ապա ամեն կերպ խրախուսում է զինակոչիկին, որպեսզի նա ժամկետային զինծառայությունից հետո համալրի զինված ուժերի մշտական կազմը:
- Զինակոչիկի քաղաքացիական մասնագիտությունից, մասնագիտական առկա պոտենցիալից ու գիտելիքներից, ինչպես նաև եբրայերենի իմացության մակարդակից է կախված, թե ինչ զորատեսակում նա ծառայության կուղարկվի և այդ ընթացքում ինչ զինվորական պաշտոններ կստանձնի (կամ առհասարակ կստանձնի՞, թե՞ ոչ):
- Ծառայության ավարտից հետո անցնելով պահեստազոր՝ զինվորականներն ԻՊԲ-ից ստանում են դրամական «նվեր», որը նախատեսված է նրա բուհական (քաղաքացիական) կրթության համար: Սա հավելյալ մոտիվացիա է զինվորների բարոյական կերպարի բարելավման համար, քանի որ վատ ծառայության և առաջադիմության ցածր արդյունքների դեպքում զինվորը զրկվում է այդ դրամական հնարավորությունից:

Հոգևոր ոլորտ

Իսրայելում պետությունը և հասարակությունը բարձր են արժևորում զինվորականությանը՝ լինի շարքային, թե բարձրաստիճան սպա: Զինվորը հասարակությունում բարձրագույն արժեք է: Դրանից է բխում նաև Իսրայելում և համայն հրեությունում հրեա ռազմագերու նկատմամբ բարձրագույն հոգածության հանգամանքը: Բազմաթիվ են օրինակները, երբ Իսրայելի ղեկավարությունը պատրաստակամություն է հայտնում 1 հրեա ռազմագերուն փոխանակել 1000 և ավելի գերիների հետ:

- Պետության և հասարակության կողմից շարքային զինվորի բարձր արժևորումն, ըստ երևույթին, պայմանավորված է նրանով, որ Իսրայելի յուրաքանչյուր քաղաքացի իր և իր ընտանիքի, մերձավորների, հարազատների անվտանգության երաշխիք է համարում զինվորի համապատասխան զարգացման մակարդակը և նվիրումը:
- Զինծառայությանը հոգեբանորեն պատրաստվում են ոչ միայն զինծառայողները, այլ նաև նրանց ծնողները: ԻՊԲ-ն իրականացնում է հատուկ կանոնավոր հանդիպումներ զինծառայողների ծնողների հետ, նրանք ստանում են համապատասխան տեղեկատվություն ծառայության տարբեր հարցերի շուրջ: Անցկացվում են նաև սեմինարներ,

քննարկումներ այն զինվորների ծնողների հետ, որոնք նոր են հայրենադարձվել: Կազմակերպվում են ծնողների այցելություններ զորամասեր՝ տեղում պայմաններին ծանոթանալու և ընտանիք-բանակ փոխգործակցության ձևաչափն ամրապնդելու նպատակով:

- Իսրայելը միջազգայնորեն բացառիկ երկիր է, որի զինվորներն արձակուրդի ընթացքում, որպես կանոն, իրենց հետ են ունենում իրենց ամրակցված հրազենային զենքը: Երկրի տարբեր քաղաքներում, բնակավայրերում սովորական երևույթ է տեսնել փողոցներում առօրյայի, անցուդարձի մաս կազմող, զենքն ուսին զինվորների: Այդ երևույթի պատճառով միջադեպերի, որպես կանոն, բացակայությունը պայմանավորված է նախևառաջ հրեության ու նաև զինվորականության հոգևոր-բարոյական արժեհամակարգով, որը համարվում է հոգու պահպանման պայման: Այդպիսով, «զենքի գործածությամբ կարելի է սպանություն գործել միմիայն սեփական կյանքը, մերձավորների կյանքը և ժողովրդի կյանքը պաշտպանելու համար»: Մերձավորարևելյան մշակույթում տղամարդու և զենքի ֆիզիկական շփումը երիտասարդի հասունացման կարևոր գործոն է (այլ կերպ հայտնի է որպես «հասունացման նախաշեմ»): Ինչպես նկատում է հրեա զինվորականներից մեկը, «զենքը մշտապես քեզ հետ պետք է լինի՝ ուտելիս, քնելիս, լողանալիս... Երբ զինվորն առանց զենքի է մնում, նրանից սկսում է մի կարևոր բան պակասել»:

«ԳԼՈԲՈՒՍ» ամսագիր
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ globus@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 14.12.2018թ.
Թիվ 10 (99), 2018թ.
Տպաքանակը՝ 150։

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70x100 1/16
Պայմանական 4 մամուլ։ Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «Հայկարլի» ՍՊԸ տպարանում